

9(47.925)

4-36



03 AUG 2009



ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԵՐՔ

Մ Ո Վ Ս Ի Ս Ի Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ի Ո Յ

# ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԺԳ.

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԵՐԻՔ

ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՅԻՈՅ



ՎԻՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1894.

9(47.925)

4-36 48.

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԵՐՔ

# ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Գ Բ Ե Ց

## Ա. Գ Ա Ր Ի Է Ր

Ուսուցչապետ յուսումնարանի Արեւելեան Կենդանի  
Հեզուաց, Օժանդակ-վարիչ Ուսումնարանի Բարձրագոյն  
Ուսմանց Ի Փարիզ

1907  
ՀԵՄԻ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ե Ծ



Վ Ի Ե Ն Ե Ա

Մ Խ Ի Թ Ա Բ Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1894.





Անցեալ տարի հրատարակած էինք հայագէտ Ա. Գարիէրի ուսումնասիրութիւնքն Մ. Խորենացոյ նորագոյն աղբերաց<sup>1</sup>, որոնք ընդորովին նոր լոյս փռեցին ինչորոյս վրայ: Ասկէ վերջը հայագէտը նորանոր եւ կարեւորագոյն գիտեք ըրաւ՝ երկու ծանրակշիռ կէտ զբոնելով, մին այն որ Խորենացի շատ յաճախ զործածած է զՄաղաղաս, եւ երկրորդ որ Խորենացոյ քով կը զբոնուի արծանագրութիւն մ'որուն գտիչն է Պրոկոպիոս: Այս նորագոյն ուսումնասիրութիւնքն հրատարակուեցան այս օրերս առանձին զբրուկով իբրեւ Յաւելուած առաջին քննութեանց՝ զաղղիներէն լեզուաւ:<sup>2</sup> Այժմ'ի լոյս կը հանենք այս Յաւելուածին հայերէն թարգմանութիւնն ալ, որով կ'ամբողջանայ առաջին թարգմանութիւնը: Տետրակիս մատուցն՝ ինչպէս նախընթացինը, լոյս տեսած են մաս մաս «Հանդէս Ամսօրեայ», ուսումնասիրութիւն մէջ:<sup>3</sup> Տետրակիս մէջ աւելցուած է միայն հեղինակին Յառաջաբանը:

Հ. Գ. Տ.

<sup>1</sup> Արարիչ Ազգերի Մշակիչ Խորենացոյ. քննադատական ուսումնասիրութիւնք. գրեց Ա. Գարիէր, թարգմանութիւնն Վիեննա, տպ. Միսիթ. 1893. 8<sup>o</sup> էրես Ժ եւ 51:

<sup>2</sup> A. Carrière, Nouvelles Sources de Moïse de Khoren etc. Supplément. Vienne, imprimerie des Méchitharistes 1894. 8<sup>o</sup> VIII pp. 40.

<sup>3</sup> Հմմտ. Հանդէս 1893, Թ. 10, էջ 309—311. 1894, Թ. 2, էջ 53—67 եւ Թ. 4, էջ 120—127:



Անցեալ տարի «Յորագոյն Աղբերք  
Մովսիսի Խորենացոյ», վերնագրին  
ներքեւ հրատարակուած մատենկան կցե-  
լով այս «Յաւելուածն», նորէն քննու-  
թեան չեմ առնուր արդէն պարզաբանուած  
իրերը: Ո՛չ թէ որովհետեւ կը կարծեմ թէ  
նիւթն սպառած է արդէն, քա՛ւ լիցի. քայց  
ինդիրն օգտիւ չի կրնար քննութեան առ-  
նուիլ կրկին անգամ, քայց միայն Սոկրա-  
տայ հայերէն թարգմանութեանց քննա-  
դատական ուսումնասիրութենէ մ՞ետքը.  
եւ այսպիսի ուսումնասիրութեան համար  
անհրաժեշտ է որ կանխաւ քննազիրք հրա-  
տարակուին: Սպասելով ասոր՝ ուրիշ ուղ-  
ղութեամբ մը կը փնտոենք Հայոց Պատ-  
մութեան քանի մ՞աղբիւրներ, որոնք  
ցայժմ մատնանիշ չեն եղած:

Ներկայ տետրակիս մէջ բովանդա-  
կուած գրութիւնքն ալ՝ ինչպէս նախըն-  
թացին մէջ՝ տարանջատ հատուածներ են,

իրարմէ անկախ գրուած՝ ըստ չափու  
որով իմ հետազօտութիւնքս արդիւնքի մը  
կ'առաջնորդէին: Երբ Մաղաղասայ վրայ  
եղած յօդուածը կը գրէի, եւ ո՛չ կը կոա-  
հէի թէ անոր յաջորդէր պիտի ուրիշ մը  
Պրոկոպիոսի վրայ: Սակայն եւ այնպէս  
այս փոքրիկ աշխատսիրութիւնքն կը հրա-  
տարակեմ՝ առանց բան մը փոխելու: Շատ  
զոհ եմ որ այս դրութեան հետեւեցայ ան-  
ցեալ տարի, ուստի այսօր անկէ հրաժա-  
րելու յօժար չեմ:

Առ Հ. Յ. Տաշեան ուղղեալ նամակն՝  
որ առաջին տեղը կը գրաւէ, ամէնէն յա-  
ռաջ խոստովանութիւն մըն է մոլորութեան  
մ'որով բաւական երկար ժամանակ սխալ  
հետոց ետեւէն գացի: Կը կարծէի թէ Մ.  
Խորենացոյ մէջ գտած ըլլամ ստոյգ հետ-  
քեր անոր Զատկական ժամանակա-  
գրութիւնը գործածած ըլլալուն: Խաբու-  
ած էի, եւ քիչ մնաց որ նշմարէի սխալանքն  
այն ատեն միայն, երբ ալ շատ ուշ էր: Բա-  
րեբախտաբար կրցայ ժամանակին հաս-  
տատել որ Զատկական ժամանակա-  
գրութեան ամէն տեղերն, զորոնք համե-  
մատած էի Հայոց Պատմութեան հետ,  
փոխառութիւնք էին ինքնին գլխովին Յով-

հաննու Մաղաղասայ ժամանակագրութենէն, որ քանի մը տարի երիցագոյն է: Ուստի վերջինս իբրև աղբիւր ծառայած ըլլալու է հայ պատմագրին: Իսկ այն պարագայն որ երկու ժամանակագրութեանց մէջ կը վարանէի, ինչպէս նամակս կը մատնէ, չունէր ամենեւին գոյութեան պատճառ մը, եւ միայն կը ցուցնէ բիզանդական մատենագրութեան նիւթոց մէջ իմ ունեցած դոյզն փորձառութիւնս:

Երկրորդ յօդուածին մէջ կրցայ Մաղաղասայ տասնուվեց կտորներ դէմ առ դէմ դնել Մ. Խորենացոյ հայերէն բնագրին: Համեմատութիւնն այնպիսի սերտ ազգակցութիւն մը կը ցուցնէ, որ կը ստիպուինք՝ որչափ ինձ կ'երեւայ, սա երկակողմանի հետեւութիւնն ընդունելու. Եթէ Մովսէս Խորենացի չէ փոխառած Մաղաղասէն, պէտք է որ Մաղաղասս ինքնին օգտուած ըլլայ Հայոց Պատմութենէն: Երկու լուծմանցս մէջ ընտրութիւն մ'ընելը չի կրնար տարակուսական ըլլալ եւ ո՛չ մէկու մը համար: Իսկ անոնք որ չուզեն ընդունիլ իմ եզրակացութիւնքս, կրնան տակաւին երկու հեղինակաց հասարակաց աղբիւրի մ'ենթադրութեան սպաստանիլ: Կարծեմ



թէ ապացուցած եմ այս առարկութեան շատ անհաւանական ըլլալը: Մ. Խորենացւոյ եւ Պրոկոպիոսի վրայ եղած յօդուածն անոր ոչնչութիւնը պայծառ պիտի պարզէ, զոնէ ինչպէս կը յուսամ:

Այնտեղ խօսքը պարզապէս քառացի փոխառութեան մը վրայ չէ, այլ պատմութեան մ'այնպիսի իրողութեան որ իւր ժամանակակէտն ունի: Զ դարուն կէսերը Պրոկոպիոս պատմիչը խօսած է արձանագրական յիշատակարանի մը վրայ, որ կը վերաբերի հիւսիսային Ափրիկէի Բանանացոց ձեռք գաղթականութեամբ զբաւուելուն, եւ որ իւր ժամանակն ալ կար: Մովսէս Խորենացի ալ ի մէջ կը բերէ այս արձանագրութիւնը: Արդ ապացուցինք որ Պրոկոպիոս էր ճշմարիտ հեղինակն այս գիւտին, զոնէ առաջինն որ անոր վրայ խօսած է: Ուստի զբաժ է հայ պատմագրէն յառաջ, ոքուն պատմուածքն ալ ոչ թէ բուն իսկ Պրոկոպիոսէն կախումն ունի, այլ երկրորդ ձեռքի սղբիւրէ մը: Կուզուի Մաղաղասայ կորուսեալ մէկ հատակոտորը համարուի այն, ինչպէս ես կը կարծեմ, կամ նաեւ բողբոլին ուրիշ ժամանակագրի մը մէկ կտորը, հետեւութիւնը նոյն կը մնայ:

Այլ եւս իմ՝ ընդդիմաբանից համար պաշտպանութիւն մը չէ հասարակաց աղբիւրի ենթադրութիւնն, վասն զի անհնար է որ եւէ ղիսպաց մէջ 550 տարիէն անդին անցնիլ, որ Վանդալաց Պատերազմի գրոց հրատարակութեան տարեթիւն է, իբր դար մ'ետքն այն ժամանակէն, որուն մէջ կը դնէ աւանդական կարծիքն Հայոց Պատմութեան յօրինումն:

Համառօտ ըսելով՝ ցուցուցած ենք թէ Մ. Խորենացոյ գրոց մէջ կան յիշատակարաններ Զ դարու վերջէն: Մեր ընթերցողք պիտի կարենան կշռադատել թէ այս Ծորագոյն Աղբիւրք մինչեւ որ կէտ կրնան հաստատել մեր նախընթաց եզրակացութիւնքն, զոր հանած էինք հայ Սոկրատէն եղած փոխառութիւններէն:

Ա. Գ.

Փարիզ, 21 Մարտ 1894:





## Ն Ա Մ Ա Կ Ա Ռ Հ . Յ . Ց .

Պէտք չէի Մովսիսի Խորենացւոյ աղբերաց քննադատութեամբ նորէն զբաղիլ մինչեւ այն վայրկեան որ Սոկրատայ Հայերէն թարգմանութեան արդէն յայտարարուած հրատարակութիւնն աչքիս առջեւ ունենայի: Այս այսպէս միտքս դրած եւ արդէն տեսակ մ'ալ պարտաւորութիւն վրաս առած էի «Հանդէսի» ընթերցողաց առջեւ: Ար սպասէի որ ընդդիմաբաններ ելլեն, եւ չէի ուզեր անոնց պատասխանել՝ բայց միայն այն ժամանակ, երբ լիակատար բնագիրները ձեռքս ունենայի: Ընդդիմաբաններ եղան. շատ բան սորվեցուցին ասոնք ինծի, բայց չկրցան համոզել զիս՝ իմ հետեւութիւնքս կերպարանափոխ ընելու: Պր. Մալխասեանց, Հ. Բարսեղ Ա. Սարգիսեան, Պր. Նորայր Բիւզանդացի եւն շուտով պիտի տեսնեն, զոնէ այսպէս կը յուսամ, թէ ինչպիսի խնամքով ուսումնասիրած եմ իրենց աշխատսիրութիւնները, եւ թէ ինչ պատճառներով իրենց հետ համաձայն չեմ:

Եթէ, ինչպէս կը կարծեմ միշտ, Հայոց Պատմութիւնը չէր կրնար յօրինուիլ Ը դարուն սկզբէն յառաջ, շատ նշանաւոր կերպով կ'ընդարձակի հեղինակին դորձածած աղբիւրներուն քննութեան ազատ ասպարէզը: Ես սկսայ մշակել զայն եւ ինծի կ'երեւայ թէ հունձքը շատ առատ եղաւ:

Արդիւնքն «Հանդէսի» ընթերցողաց ալ հազարգելու համար, Չեզի ծանուցած եւ դրած էի հատուած մ'այն փոխառութեանց վրայ, զոր Մ. Խորենացի բրած է «Զատկական ժամանակագրութեանէն», որ Հերակղիոսի (610—641) վերջին

1 Հանդէս Ս. 1893, էջ 1893, էջ 184 եւ Նոր-  
 փոյն արգելիչ, էջ 41 եւն:

տարիններէն է՝: Ես չէի դատած անձամբ այս ի մէջ բերուած կտորները, վասն զի գրեթէ ամէնն ալ արդէն Վիստոն եղբարց հրատարակութեան (1736) մէջ նշանակուած են, բայց ճանչցած էի որ ասոնք են հայ պատմագրին աղբիւրները: Վերջին վայրկեանիս, պարապոյ օրերու ուղեւորութեան մ'ելլելու ժամուն, տեսայ որ այս ամէն կտորները Յովհաննէս Մաղաղասի թամանակագրութեան մէջ կը գտնուին, որ մինչև ԅրևոտինիանոսի թագաւորութեան վերջը (565) կը հասնի, բայց թերեւս աւելի ուշ յօրինուած է՝:

Այս երկու ժամանակագրութիւններուն որմէն օգտուած է Հայոց Պատմութեան հեղինակը: Այս խնդրին պատասխանել կարելի չէ առանց նախապէս մանրախոյզ կերպով ուսումնասիրելու այս բնագիրներն, որուն զբաղելու այժմ ժամանակ չունիմ. եւ այսպիսի ուսումնասիրութիւն մ'անով աւելի դժուարին եղած է՝ որ Յովհաննէս Մաղաղասի թամանակագրութեան սկզբնական բնագիրը չունինք, այլ միայն մէկ համառօտութիւնը: Հարեւանցի քննութենէ մ'ետքը միտեալ կ'ըլլամ կարծելու որ Մովսէս Խորենացի Մաղաղասի թամանակագրութիւնը գործածած է, որուն մէջ կը գտնուին շատ մը կտորներ, զորոնք հայ հեղինակն ի կիր արկած է, եւ որոնք կը պակսին Չատկական թամանակագրութեան մէջ:

Ուստի հրատարելով Չեղի խաւրել այս վերջին թամանակագրութեան վրայ իմ յայտարարած յօդուածս, զոր պէտք է այժմ նոր յօրինել ամբողջովին, կը շատանամ Չերաչաց առջև գնել Մաղաղասի մէկ կտորն, որ կ'երեւայ թէ Հայոց Պատմութեան Գ գրոց թի գլխուն աղբիւրն եղած է՝ այն մասին համար, որ կոստասայ թագաւորութեան

1 Քրոնոլոգիէր, Պատմութիւն Բիւզանդական մատենագրութեան, էջ 116:

2 Անդ, էջ 112:

վերջին տարիները, Պարսից դէմ պատերազմն եւ  
ինքնակալին ի Մոփսուէտաթիա մեռնելը կը բովան-  
դակէ: Շատ ժամանակ կայ որ ծանօթ էր թէ Մ.  
Խորենացւոյ պատմածն սրշափ անբաւական է եւ  
անծիշդ, եւ դժուար էր բմբռնել թէ ինչպէս հայ  
պատմագիր մ'այնպէս անորոշ բացատրութիւններ  
դործածել կրնար այնպիսի պատերազմ մը յիշա-  
տակելու՝ որ իրեն հայրենակցաց քով պէտք էր  
հաշակաւոր եղած բլլալ Ամթայ առժամբ: Յաջորդ  
երկու հատակատորներուն համեմատութիւնը կը  
յուսամ պիտի յուցընէ որ Մ. Խորենացի պարզապէս  
բնդօրինակած է յոյն հեղինակի մը շատ թերակա-  
տար տեղեկութիւնքը:

Մ. Խորենացի. Գ. 12:

Իսկ Արստանդեայ արա-  
բեալ ԱնտարզՅուլիանոս,  
սպառազինեցաւ բնդդէմ  
Պարսից.

Եւ տուեալ ճակատ, եր-  
կուքին կողմնքն պար-  
տեցան. քանզի բազումք  
անկան յիւրաքանչիւրոց,  
եւ ոչ մի ի միւսոյ թի-  
կունս դարձոց մինչեւ ի  
հաւանութիւն եկեալ,  
արարին խաղաղութիւն  
ամս սակաւս:

Մաղախաւ, էջ 325:

Ἐπὶ δὲ τῆς αὐτοῦ (Κων-  
σταντίου) βασιλείας ἐ-  
κίνησαν οἱ Πέρσαι, ἦτοι  
Ἀββουραρσάκιος (Σαβ-  
βουραρσάκιος) ὁ βασι-  
λεύς.

καὶ ἐπεστράτευσεν κατ'  
αὐτῶν ποιήσας Καίσαρα  
Ἰουλιανὸν συγγενέα αὐ-  
τοῦ . . .

καὶ κατελθὼν ἐπὶ τὰ  
Περσικὰ

ἐποίησε πάχτα εἰρήνης  
μετὰ Περσῶν ἐπὶ φα-  
νερὸν χρόνον, πολλῶν  
πесόντων ἐξ ἀμφοτέ-  
ρων ἐν τῇ συμβολῇ.

Եւ ի Պարսից դար-      Καὶ ὑποστρέφας . . .  
 ձեալ Կոստանդեայ ,      καὶ εἰσελθὼν ἐν Μαρ-  
 յերիար Հիւանդացեալ      φουεστία πόλει τῆς Κι-  
 փախδանեցաւ ի Մոսի-      λιχίας, ἀρρωστήσας τε-  
 սիւեստի քաղաքին Կիւ-      λευτῶ ἔξει.<sup>1</sup>  
 լիկեցւոց :

Միտ գնելու է որ միայն Մ. Խորենացի եւ ՅՏ. Մաղաղաս կը յիշեն՝ որչափ ինծի ծանօթ է՝ Շապհոյ եւ Կոստասոյ մէջ եղած խաղաղութիւն կամ զինարար մը : Ուրիշ որեւէ պատմագրաց մէջ չենք գտներ Մոսսուեստիոյն՝ յիշատակութիւնն ալ , — որ անուան ուղղադրութեան կերպը միեւնոյն է երկու բնագրաց մէջ , — իբր տեղի մահուան Կոստասոյ : Աւերն արդէն նշանակեցի որ Մաղաղասոյ բնագիրը միայն Համառօտութեամբ Հասած է մեզի :

Արդէն կրնայի այժմէն իսկ Չեղ նշանակել յոյն ժամանակագրիս շատ մը կտորներն , որոնք միեւնոյն կերպով կրնանք Համեմատել Հայ պատմագրին Հետ : Սակայն կարծեմ՝ թէ լաւագոյն կ'ըլլայ գատնէք ուրիշ աւելի մանրագնին ուսումնասիրութեան մ'ընթացքին մէջ գնել : Կը շտառեամ ուրեմն մատնանիշ ընելով Չեղ Մ. Խորենացւոյ Հատակոտար մը , որուն ծագումն մինչեւ ցայժմ ի զուր փնտռած էի . այս կտորն է Թէոդոսի ձեռօք Թեոսաղոնիկէի բնակչաց կոտորածին պատմութիւնը

1 «Ի ժամանակս սորա (Կոստանդեայ) խլտեցան զրդոեցան Պարսիկք այսինքն արքայն Երրուրարչակ (Շապուհարչակ) եւ Կոստանտեայ արարեալ կեսար զՅուլիանոս զազգական իւր , սպառազինեցաւ ընդդէմ նոցա : . . . Եւ գնացեալ ի վերայ Պարսից արար խաղաղութիւն ժամանակս բազումս քանզի ի ճակատու անդ բազումս անկան յիւրարանչութոյն : Եւ դարձեալ եւ մտեալ ի Մոսիսուեստիա քաղաք Կիւլիկեցոց՝ անդ Հիւանդացեալ փախճանի :»

2 Ուստի սխալած էի կարծելով որ Մ. Խորենացւոյ «Մոսիսուեստ» գրելը կրնայ Սոկրատոյ յիշած «Մոսսուկրէն» ձեւին աղաւաղութիւնն ըլլալ , որ Հայ թարգմանչին գործն ըրայ . Նորոգոյն — գէրգ . (էջ 42 Ծան. 31)



Հմմտ. Մ. Խոր. Գ. լթ. եւ Յ. Մաղաղաս, հրա-  
ի Պւն, էջ 347:

Ծանօթ են ինծի այն ամէն առարկութիւնք,  
զոր կրնան ինծի բնել այսպիսի աճապարանօք զբուսած  
տեղեկութիւնս կարդալէն ետքը: Միայն կը խըն-  
դրեմ Չեղմէ որ վերջնական դատաստան մը կարե-  
լու համար՝ հաճիք սպասել մինչեւ որ հետազոտու-  
թեանցս արդիւնքը մանրամասն պարզեմ: Իսկ այս  
տարանջատ հատակոտորս այժմէն Չեղի խաւրելս եւ  
“Հանդէս” մէջ ասպնջականութիւն շնորհելնիդ  
խնդրելս անոր համար է, վասն զի շատ կարեւոր  
պատճառներ ունիմ հայագիտաց մտադրութիւնն՝  
որչափ կարելի է շուտով՝ հրատարելու Յովհ. Մա-  
ղաղասի ժամանակագրութեան վրայ: Այլեւայլ  
նշաններ կը համոզեն զիս կարծելու որ Հայոց  
Պատմութեան հեղինակն աչքին առջեւն հայե-  
րէն թարգմանութիւն մ'ունի, որ եղած էր տա-  
կաին շհամառօտուած յոյն բնագրէ մը: Արդեօք  
կայ՞ զեռ այժմ եւս այս թարգմանութիւնը: Ոչ  
արդեօք թաղուած է Եջմիածնի կաթուղիկոսական  
մատենադարանի գանձերուն մէջ: Ար խոստովանիմ  
որ տպուած երկասիրութեանց մէջ ամենեւին հետք  
մը չեմ գտած:

Այսպիսի թարգմանութեան մը գտնուիլն  
այնչափ կարեւորութիւն կրնայ ունենալ, որուն ար-  
ժէքը չենք կրնար իբր չափազանց նկատել, նախ  
հայերէն մատենագրութեան եւ յետոյ նաեւ բիւ-  
զանդական ժամանակագրութեան՝ տեսակիտիւ:

Հաճեցէք բնդունել եւն:

Փարիզ, 11 Սեպտեմբեր 1893:

Ա. ԳԱՐԻԷՐ

<sup>1</sup> Քրոնոգրաֆիկ, անդ:



ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԵՐՔ

Մ Ո Վ Ս Ի Ս Ի Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ի Ո Յ

Ե .

Մոլխես խորենացի եւ ժամանակագրութիւն  
Մաղաղասայ .

Պատմական քննադատութիւնը չէ ճշգրիտ  
գիտութիւն մ'այն իմաստով, որով կը նշա-  
նակենք ուսողութիւնն եւ երկրաչափութիւնը:  
Չի յենուր որեւէ առածի մը վրայ, փորձառական  
եղանակաւ կը յառաջանայ եւ շատ անգամ են-  
թադրական հետեւութեանց կը հասնի: Ստուգու-  
թեան աստիճանն՝ որուն հասնիլ կրնանք, ուսողա-  
կան յայտանդիմանութեան նկարագիրքն չունի  
ամենեւին. այսպէս իսկ կը պահանջէ այն նիւթոց  
բնութիւնը, որովք կը զբաղի քննադատական  
ուսումնասիրութիւնը: Եւ այս է պատճառն որ  
պատմական ապացուցութեանց՝ ըստ երեւութին  
ամենէն հաստատունքն անգամ՝ միշտ բնդդիմաբա-  
նութեանց կը հանդիպին կամ գոնէ կրնան հան-  
դիպիլ: Անօրեայ փորձը կը հաստատէ զայս:

Հաստատեցինք իրողութիւն մը. բայց այս  
հաստատած իրողութեան արդիւնքն այն ըլլա-  
լու չէ որ պատմական նիւթոց մեջ սկեպտական  
ընէ զմեզ: Արդեամբք ալ կրնանք հաստատել միւս  
կողմանէ ոչ նուազ ստուգութեամբ՝ որ պատմա-  
կան ճշմարտութեան մերձենալէն չենք դադրիր,  
եւ այս՝ նախընթաց սերնդոց ամբարած աշխատու-  
թեամբքն, հետազոտութեան յորինուածութեանց  
կատարելագործուելովն եւ այժմու գիտնական հե-  
տազոտութեան աւելի եւս խստանալովն: Այս

մտօք՝ յառաջադիմութիւնն այնպէս անուրանալի է որ ոչ զք ասոր վրայ կը տարակուսի :

Արդ ուրեմն՝ երբ յօրինուածաբար յառաջ տարուած ուսումնասիրութեանց շարք մը մեզի այնպիսի եզրակացութիւններ հանելու կ'առաջ նորդէ՝ որ հակառակ են յառաջադոյն ընդունուած գաղափարաց, պէտք է որ ընդդիմաբանութեան ակնկալենք : Եւ այս բնական է : Մանաւանդ թէ ցաւալի կ'ըլլար եթէ այլազգ ըլլար. վասն զի ընդդիմաբանութեամբ յաճախ ի լոյս կը հանուին իրողութիւններ, որոնք անտես եղած էին . երբեմն ցուցման մը տկարութիւնն որսչակի կը ներկայացուի, եւ կը ստիպէ միշտ որ մանրախոյզ հետազօտողն այն եզրակացութիւնքն աւելի եւս ամրապնդէ : Առ այս՝ ամէնէն աւելի ազդուն կ'ըլլայ՝ եթէ հակառակութեան նիւթ եղած խրնդիրն ուրիշ մէկ կողմէն առնուիլ կարելի ըլլայ, ուրիշ ճամբայ մը մտնել եւ ցուցնել որ այն ալ միեւնոյն կէտին կը հասցընէ՝ սրուն հասցուցած էր առաջին ճամբան : Ասով, ինչպէս կը պատահի հաշուի մէջ, առաջին գործողութեան փորձն ըրած կ'ըլլանք :

Այս կարգի փորձ մ'այսօր բնել կ'ուզեմ այն եզրակացութեանց համար, զորոնք հանած էի քննութեամբ Մ. Խորենացոյ մէկ աղբեր, այն է հայերէն Սոկրատայ, որուն սկիզբը կը գտնուի Սեդէս-որոնի Ա-բ-բէ : Կարծեցի թէ իրաւունք ունէի հետեւեալ խորհրդածութիւնն ընելու. «Եթէ Հայոց Պատմութիւնը չի կրնար Ե գարունն՝ ինչպէս աւանդութիւնը կը պահանջէ՝ գրուած ըլլայ, այլ յայտնապէս Ը գարուն, ինչպէս կ'երեւայ թէ իմ հետազօտութիւններէս կ'եզրակացուի, զարմանալի կ'ըլլար եթէ երկու միջանկեալ գարերը, այսինքն Զ եւ Է գարք, Մ. Խորենացոյ ինչ ինչ աղբիւրներ մատակարարելու գործակցած չըլլային : Արդ եթէ այս երկու գարուց պատմական գրակա-



նութիւնը կրկտելով բան մը չգտնեմ, իմ առաջին  
ապացուցութիւնս՝ թէ եւ չտապալի, սակայն նաեւ  
իմ աչացս առջեւ կը կորսնցընէ այն յայտանդի-  
մանութեան նկարագիրն՝ զոր իրեն կ'ընծայէի :  
Ընդհակառակն եթէ կարենամ ցուցընել որ հայ  
մատենագիրն աւելի կամ նուազ յաճախութեամբ  
գործածած է մէկ կամ շատ հեղինակներ Ձ կամ  
Է գարուն՝ որոնք բանակառուին մէջ տակաւին չեն  
յիշուած, ասով պայծառ կերպով կը հաստատուի  
իմ յառաջագոյն պաշտպանած խնդիրս :

Արդէն պատմած եմ առ Հ. Յ. Տ. գրած  
նամակի մը մէջ՝ թէ քնչպէս ի սկզբան կարծեցի  
թէ Չարունի ժամանակէն մէջ գտած  
բլլամ Մ. Խորենացւոյ աղբիւրներէն մին, եւ թէ  
քնչպէս տակաւ եկայ հասայ մինչեւ Յովհաննու  
Մարտիանայ ժամանակէն (Չ գարուն վեր-  
ջերը)։ Աւստի աւելորդ է կրկնել հոս այն բաներն՝  
որ Հարունի բնութեցողաց արդէն ծանօթ են :  
Նմանապէս անցարմար է հոս ձեռնարկել Մաղա-  
ղասայ ժամանակէն մինչեւ ճշգրտագոյն թուակա-  
նին վրայ խնդիր յուղելու, որ այժմու բնագրին  
համեմատ՝ կը հասնի կը մնայ Յուստինիանու  
ՅԵՐԵՒ տարին (563) . բայց որովհետեւ այս գործքը  
մեզի հասցընող միմիայն ձեռագիրը պակասաւոր է  
ի վերջոյ, կարելի եղած է բնութենիլ որ հեղինակն  
իւր երկասիրութիւնը շարունակած էր մինչեւ  
Հերակղեայ գահակալութիւնը (610) :<sup>2</sup> մեր գիտած  
նպատակին համար կը բաւէ գիտնալը որ գործքն  
Չ գարուն վերջին երրորդ մասէն յառաջ գրուած չի  
կրնար բլլալ : Իսկ իւր պատմական արժէքին քնչ  
բլլալը գիւրաւ պիտի իմացուի այն սխալներովն,  
զորոնք գործել տուած է Մ. Խորենացւոյ : Մա-  
ղաղասայ գրքին բազմաթիւ թերութիւնքն արդէլք

<sup>1</sup> Տես վերը՝ էջ 1 :

<sup>2</sup> Տես Քրիստոսեան, պատմութիւն բիւզանդական  
մատենագրութեան, էջ 112 եւն :

չեղան որ ժողովրդական ըլլար, եւ իրմէ ետքն եկող եւ իրեն նմանող ժամանակագիրներու մեծագոյն մասին աղբիւրն ըլլար: Ուստի քանի կ'երթայ՝ կը հաստատուինք այն կարծեաց վրայ թէ այս գրքին հայերէն թարգմանութիւնն ալ կար, եւ թէ Հայոց Պատմութեան հեղինակն այն թարգմանութենէն միայն գիտէ զՄաղաղաս:

Այն համեմատութիւնք, զոր պիտի ընենք Մ. Խորենացւոյ եւ Մաղաղասայ բնագրաց մէջ,՝ ամէնն ալ հաւասարապէս ապացուցիչ չեն: Ոմանց, թէ եւ ի հարկէ սակաւուց թուով, նմանութիւնք՝ խստիւ խօսելով՝ կրնայ ուրիշ կերպով ալ մեկնուիլ, եւ ո՛չ միայն կախման աղերսիւ: Ուստի նախ մտածեր էինք որ ամէնէն յառաջ դնենք այն կոչմունքն որ ամէնէն աւելի որոշիչ են, որոնք ամէնէն աւելի յայտնի կերպով կը ցուցնեն թէ հայն մերթ համառօտութիւն եւ մերթ բառական թարգմանութիւն է յունին: Երբ այսպէս միանգամ այլեւս տարակուսի տակ չմնայ փոխառեալ ըլլալը, կրնայինք դնել այն կտորներն ալ, որ այնչափ առանձնայատուկ չեն, եւ այսպէս՝ նախընթաց ապացուցումն օգտիւ գործածել վերջնոցս համար: Այսպէս վարուիլն շատ օրինաւոր էր, եւ սակայն հրաժարեցանք անկէ: Մեզի այնպէս երեւցաւ որ հետեւելով գլուխ առ գլուխ նոյն իսկ Մ. Խորենացւոյ կարգին, բոլորովին զերծ կ'ըլլանք այն ամբաստանութենէն թէ արուեստակեալ կերպով կարգաւորած եւ ներկայացուցած ըլլանք իրողութիւններն, որպէս զի մեր եզրակացութեանց աւելի նպաստաւոր ըլլան: Ուստի ընթերցողին կը մնայ դատաստան ընել անձամբ՝ ուսումնասիրելով մի առ մի վեշտասան հատակոտորքն, զորոնք կը պարունակէ Հայոց Պատմութեան՝ Մաղաղասայ ժամանակագրութեան հետ մեր ըրած համեմա-

1 Մաղաղասայ գրքէն կոչում կ'ընենք ըստ հրատարակութեան Պոնն քաղաքի, 1831ին:

տութիւնը: Պիտի կշռադատէ բնագիրքը, համեմատութեանց արժէքն որոշէ, եւ այսպէս կարող պիտի ըլլայ ինքնին հանել այն հետեւութիւնքը, որոնք կը կարճէ թէ կ'ելլեն իւր քննութենէն:

Յաջորդօ՞յն մեր կոչումն ընելու կտորներէն շատերն այնպէս են՝ որ շատ երկայն մեկնաբանութեանց առիթ կրնան տալ: Բայց որովհետեւ մենք կ'ուզենք միայն Մ. Խորենացւոյ աղբերքն հետազօտելով շատանալ, եւ ոչ թէ գիտնական հրատարակութեան մը համար ծանօթութիւններ դրել, միայն այնպիսի գիտողութիւններ ըրինք որոնք անհրաժեշտ հարկաւոր են երկու բնագիրները հասկընալու եւ համեմատելու համար:

## Ա.

Մ. Խորենացի Բ, 13. Մաղաղաս, էջ 155—156:

Արիւսոս	Κροῖσος
անցեալ ընդ Ալիւս ֆէր	Ἄλυν ποταμὸν διαβάς
քակեսցէ զիշխանութիւնս:	μεγάλην ἀρχὴν καταλύσει. <sup>1</sup>

Հերոդոտ այս երկդիմի պատգամին վրայ կը խօսի, բայց անոր բնագիրը չի յիշեր:<sup>2</sup> Արիստոտել<sup>3</sup> աւանդած է մեզ Պիւթեան հարցուկին արտասանած տողը.

“Արիսոս անցեալ ընդ Ալիւս քակեսցէ իշխանս զիւր:” Մաղաղաս, որ շատ քիչ գրադէտ է, ոտանաւոր տողս այլակերպած է եւ չափն աղարտած՝ ընդմիջարկելով ποταμὸν բառը, որ Մ. Խորենացւոյ քով հայերէն ֆէր թարգմանուած է:

<sup>1</sup> “Արիւսոս անցեալ ընդ Հաղիւս գետ քակեսցէ իշխանութիւն մեծ:”

<sup>2</sup> Հերոդ. Ա, 53:

<sup>3</sup> Հսեաոր. Գ, 5:

Մ. Խոր. Բ, 76.

Մսիաղաւ, էջ 301—302:

. . . Տակիտոս

Ἐπὶ δὲ τῆς βασιλείας  
τοῦ αὐτοῦ Τατίτουընդդէմ Արտաշէր<sup>1</sup>

գոյ զկողմամբ Պոնտոսի

ἐγένετο πόλεμος ἐν τῇ  
Ποντικῇκαὶ κατήλθεν ὁ αὐτὸς  
βασιλεὺς πολεμῶν,

. . . որ եւ սպանաւ ի յիւ-

καὶ ἐσφάγη

րոցն

ի Ճանիւս պոնտացւոց որ

ἐν Ζταννικῇ<sup>2</sup> τῆς Πόν-

էն Խաղաթբ. նոյնպէս եւ

του . . .

էրայր նորա

Փրոսիանոս . . .

Φλωριανός . . . ἐπε-

στράτευσεν κατὰ Περσῶν,

καὶ ὡς κατέρχεται

ἐν Ταρσῶ, ἐσφάγη ὑπὸ

τῶν ἰδίων...<sup>3</sup>

ի Տարսն :

Հին Հեղինակը շատ անմիաբան են տեղւոյն նկատմամբ ուր ինքնակալն Տակիտոս Հիւանդութեամբ մեռաւ կամ սպանուեցաւ իւր զօրքէն (276:) Զոսիմոս կ'ըսէ թէ յերրոցա մեռաւ. Աւրեղիոս Ա իկտոր («Համառօտութիւն») ի Տարսն Արիկեցւոց. նոյն Ա իկտոր («Ասն Աեսարաց») ի Տիւանէս Ասպպազովկացւոց: Միայն Մաղաղաւ եւ

<sup>1</sup> Անցողակի յեղէք որ Արտաշէր († 241) արդէն 34 տարի յառաջ մեռած էր, երբ Տակիտոս ինքնակալութեան ծիրանին զգեցաւ (276:)

<sup>2</sup> Արդեւու է ի ԴՅաննիկ; ՀՏՏՏ. οἱ ԴՅάννοι առ Մաղաղ, էջ 347, տող 8, եւ ԴՅաննիկ առ Պրոկոպ., Ա. 22 պարտ. պարբերակն, Բ, 29:

<sup>3</sup> Առ թագաւորութեամբն նորին Տակիտոսի եղեւ պատերազմ ի կողմանս Պոնտոսի, եւ գնաց թագաւորն պատերազմել եւ սպանաւ ի Ճանիւս Պոնտացւոց . . . Փրոսիանոս չոգաւ պատերազմաւ ընդդէմ Պարսից, եւ իբրեւ եկն ի Տարսն, սպանաւ յիւրոցն . . . »



Մ. Խորենացի են, որ այս դէպքն եղած էր պատմեն ի ճանէս, զոր Հայք Խաղաիք էր հռչէին:՝

Գ.

Մ. Խոր. Բ, 79.

Եւ ի պատերազմէն  
Պարսոսայ ընդ Գուժս,  
եղել սով սաստիկ.

Եւ յոչ գտելոց շտեմա-  
րանայ՝  
յարեան զօրքն ի վերայ  
Եւ սպանին զնա:

Մտադրաս, էջ 302:

Ὁ δὲ αὐτὸς βασιλεὺς  
Πρόβος ἐπολέμησε τοῖς  
Γότθοις ἐν τῷ Σιρμίω.  
καὶ ἐν τῷ πολεμείν  
αὐτὸν  
ἐγένετο λιμὸς κοσμηκὸς  
μέγας,  
καὶ μὴ εὐρεθέντων ἀνα-  
λωμάτων  
ἐστασίασεν ὁ στρατὸς.  
καὶ ἐπελθόντες ἔσφαξαν  
αὐτὸν ἐν τῷ Σιρμίω...<sup>2</sup>

Երկու բնագրաց նմանութիւնն աւելի ակնու-  
րել կ'երեւայ, եթէ գիտցուի որ դարձեալ միայն  
Մաղաղաս եւ Խորենացի են որ Պարսոսի զօրաց  
սպառաժութեան պատճառ սովը էր գնեն:

Գ.

Մ. Խոր. Բ, 83.

... զոր արարեալ սիւ-  
զնոյն

Եւ առաջաբերեալ,  
յաղթեաց պատերազ-  
մայն:

Մտադրաս, էջ 316—317:

... ἐποίησε σίγνον σταυ-  
ροῦ,  
ὡς εἶδεν ἐν τῷ ὕβρανῳ,  
καὶ προηγείτο αὐτοῦ...  
ἐνίκησε τὸν πόλεμον  
κατὰ κράτος.<sup>3</sup>

<sup>1</sup> Հմմտ. Մ. Խոր. Աշխ. Տրտ. Պատկ. էջ 16: Ճանի, որք են Խաղաիք: Սէն-Մարթէն պաճած է ճանի-  
Ընթերցումն փոխանակ ճանի (ՏՔԻՊ):

<sup>2</sup> «Իսկ թագաւորն Պարսոս պատերազմեցաւ ընդդէմ  
Գոտթաց ի Սիրման. եւ ի պատերազմէն նորա եղել սով  
մեծ աշխարհի. եւ իրրել ոչ գտան ծախք պարենի սպա-  
սաժութեաց զօրն. եւ յարուցեալ սպանին զնա ի Սիրման».

<sup>3</sup> «... Արար սիւզնն խաչի, որպէս ետես յերկնս».

Կ'երեւայ թէ հոս Մաղաղաս համառօտած է այնպիսի աղբիւր մը, որ շատ մեծ նմանութիւն ունի այն ընդմիջարկութեան հետ, զոր մասնանիշ բրած ենք Սեղբէօքրոնի Վարոց հայերէն թարգմանութեան մէջ: Երկու բնագրացս մէջ ալ *σίγνον*<sup>2</sup> (սի-գնոն, signum) բառին գործածուիլը չի կրնար մեկնուիլ պարզ զուգահիւզութեամբ մը:

Ե.

Մ. Խոր. Բ, 87.

Մաղաղաս, էջ 319:

Չոր արարեալ Կոստան-  
դիանոսի, յետ պատրիկ  
առաքեաց  
զՀեղինէ զմայր իւր

Երուսաղէմ ի խնդիր

պատուական խաչին,  
զոր եւ եղիտ իսկ

զփրկական փայտն,  
հանդերձ հինգ բեւե-  
ռօքն:

Ὁ δὲ βασιλεὺς Κων-  
σταντῖνος

ἔπεμψε

τὴν ἑαυτοῦ μητέρα τὴν  
χώραν Ἐλένην

εἰς Ἱεροσόλυμα εἰς  
ἀναζήτησιν

τοῦ τιμίου σταυροῦ·

ἦτις καὶ εὐροῦσα ἀνή-  
γαγε

τὸν αὐτὸν τιμίον σταυρὸν  
μετὰ τῶν πέντε ἡλῶν.<sup>3</sup>

Հայերէնն ահիյայտնի կերպով թարգմա-  
նուած է յունարէնէ, եւ առաջնոյն երկրորդէն  
կախումն ունենալն աւելի եւս որոշ կը տեսնուի  
նաեւ անկէ որ յիշեալ տեղւոյն հայերէնին ան-  
միջապէս նախընթաց խօսքը կը համապատասխանէ՝

եւ յառաջ մատուցեալ զնա . . . յաղթեաց պատերազմին  
զօրութեամբւ. . .

<sup>1</sup> Նորագոյն Աղբէր, էջ 13 եւն:

<sup>2</sup> Մաղաղաս եօթն անգամ կը գործածէ այս բառն  
զինանշանի իմաստով:

<sup>3</sup> «Իսկ թագաւորն Կոստանդիանոս առաքեաց զմայր  
իւր զփրկին Հեղինէ Երուսաղէմ ի խնդիր պատուական  
խաչին. որ եւ գտեալ երբ զպատուական խաչն հանդերձ  
հինգ բեւեռօքն»:

եթէ ոչ ըստ ձեւին գոնէ ըստ իմաստին՝ Մաղա-  
ղասայ քանի մը տող յառաջ տուած մէկ անճիշդ  
նախադասութեան (էջ 317):

Քանի՜ Շապուհաշէտայ Καὶ ἐπεστράτευσεν κατὰ  
ղիսստանդիանոս զյաղ- Περσῶν καὶ ἐνίκησεν καὶ  
թողն, ինդրել Տաշ- ἐποίησεν πάχτα εἰρήνης  
տութիւն, եւ Տաստասել μετὰ Σαραβάρου<sup>1</sup>, βασι-  
խաղաղութիւն մանջե- λέως Περσῶν, τοῦ Πέρ-  
նաւոր. (զոր արարեալ σου αἰτήσαντος εἰρήνην  
եւն:) ἔχειν μετὰ Ῥωμαίων.<sup>2</sup>

Եւ ոչ մէկ պատմագիր կ'ընդունի թէ Կոս-  
տանդիանու եւ Շապհայ մէջ խաղաղութեան դա-  
շինք դրուած ըլլայ, եւս առաւել ոչ՝ թէ Պարսից  
արքայն ինդրած ըլլայ զայն: Միայն Եւսեբեայ  
Կոստանդինոսի վերջ կ'աւանդէ զայս,<sup>3</sup> զոր Մ.  
Խորենացի չէ ճանչցած, բայց որ կրնայ Մաղաղա-  
սայ աղբիւրն եղած ըլլալ:

Զ.

Մ. Խոր. Բ, 88.

Մաղաղաս, էջ 292:

Կալէս տիեղե- րակալին	Καὶ τὸ δὲ λεγόμενον Στρατήγιον ἀνεπέωσεν ὁ αὐτὸς Σέβηρος
Աղէքսանդրի մակեդո- նացւոյ,	πρώην γὰρ ἦν κτισθὲν ὑπὸ
յորժամ անտի ընդդէմ	<sup>1</sup> Ἀλεξάνδρου τοῦ Μαχε- δόνος,
Պարեհի	ὅτι κατὰ
պառապինեցաւ, եւ սակա	Δαρείου ἐπεστράτευσεν, ὃς καὶ

<sup>1</sup> Կարդարու է Տապօրոս.

<sup>2</sup> “Եւ պատերազմեցաւ ընդդէմ Պարսից եւ յաղ-  
թեաց եւ արար գաշինս խաղաղութեան ընդ Շապհայ ար-  
քային Պարսից. ինդրելով Պարսիկն խաղաղութիւն ունել  
ընդ Հաստացեցիս:”

<sup>3</sup> Գ, 57:

այնորիկ շինեաց յիշա-  
տակ իւր

զասացեալն Սարապիդին.

քանզի ի նմա զգատերաց-  
մահանս յօրինեաց զհազ-  
մութիւն :

Ջոր յետոյ Սելեւրիսս  
արքայ Տուրքմանացոյ  
նորոգեաց :

ἐχάλεσε τὸν τόπον Στρα-  
τήγιον.<sup>1</sup>

ἔχει γὰρ στρατηγήσας  
τὰ τοῦ πολέμου ὄρμη-  
σεν εἰς τὸ πέραν κατὰ  
Περσῶν.<sup>2</sup>

Է.

Մ. Խոր. Բ, 88.

Մանյաւս, էջ 291:

... եւ ի նքն շինեաց զբա-  
զանիսն

ի տեղւոջ սեանն  
որ ունէր ստորագիր

խորհրդահանանունն Արե-  
զակն ,  
բայտ Թրակացոյ բայտի  
Ջելբուխն ,

... καὶ ἔκτισε δημόσιον  
λουτρόν τὸ λεγόμενον  
Ζεῦξιππον, διότι ἔχει  
ἴστατο ἐν μέσῳ τοῦ τε-  
τρουστώου

στήλη χαλκῆ τοῦ Ἡλίου,  
καὶ ὑποκάτω αὐτῆς ἔ-  
γραψε

τὸ μυστικὸν ὄνομα τοῦ  
ἡλίου,  
Ζεῦξιππῳ Θεῶ· οἱ δὲ  
Θραῖκες οὕτως ἔλεγον  
τὸν ἥλιον. Οἱ δὲ τῆς πό-  
λεως Βύζης οὕτως

<sup>1</sup> Ջաբախան Ժամանակագրութիւնն (էջ 265 Գ), որուն  
աղբիւրն է Տոս Մահադաս, Տրատիցիոն (Սարապիդին) կ'ըն-  
թեանու, որ կրնայ բուն Տնագոյն ընթերցուածն ըլլալ:

<sup>2</sup> Էւ զասացեալն Սարապիդին նորոգեաց ի նքն Սելեւ-  
րիսս. քանզի կանխաւ շինեալ էր, յԱղերսանդրէ մահեդո-  
նացոյ, յորժամ ընդդէմ Գարեհի սպառազինեցաւ, վասն  
այնորիկ կոչեաց զտեղին Սարապիդին. քանզի անդ յօրի-  
նեալ զպատերազմահան կազմութիւն՝ անց յայնկոյս ընդ-  
դէմ Պարսից:



որոյ հոշմամբ յորջորջե-  
ցան եւ բաղանիքն :

ὠνόμαζον τὸ αὐτὸ δη-  
μόσιον [λουτρὸν]<sup>1</sup>  
Ζεύξιππον κατὰ τὸ ὄνο-  
μα ὅπερ εἶχε τὸ πρότε-  
ρον ὁ τόπος.<sup>2</sup>

Ը.

Մ. Խոր, Բ, 88.

Մաղախա, էջ 292:

Սա շինեաց եւ

... Καὶ χτίσας ὁ αὐτὸς  
βασιλεὺς καὶ κατεναντι  
τοῦ ἱεροῦ τῆς Ἀρτέμιδος  
κυνήγιον μέγα πάνυ, καὶ  
κατέναντι τοῦ ἱεροῦ τῆς

գաւառաւանն եւ զգաղա-  
նամարտեացն

Ἀφροδίτης  
θέατρον· τὸ δὲ Ἴππικὸν  
ἔστησεν . . .

եւ զխաղաղիացն, եւ զձի-  
րնթացն

ὅπερ οὐκ ἔφθασε πλη-  
ρῶσαι.<sup>3</sup>

ոչ կատարմամբ :

Թ.

Մ. Խոր, Բ, 88.

Մաղախա, էջ 320:

Ասեն եւ զայս, եթէ

Ὁ δὲ αὐτὸς Κωνσταν-  
τῖνος

զաղանի եհանի չուովմայ

ἀφελόμενος ἀπὸ Ῥώμης  
κρύφα

5677

<sup>1</sup> Այս բառն դրած ենք բնագրին մէջ՝ ըստ Ջ. Գրի-  
ժ. Գրիգորի քերականի :

<sup>2</sup> « . . . Եւ շինեաց զհասարակաց բաղանիս զասա-  
ցեալն Ջե. քրիստոս, քանզի անդ կանգեալ էր ի միջի չո-  
րեքորահին սիւն պղնձի Արեգական, եւ ի ներքոյ դրեալ  
զխորհրդական անուան Արեգական՝ Ջե. քրիստոսայ դից. զի  
թրակացիք այսպէս կոչեն զարեգական իսկ բնակիչք բաղա-  
քին Բելգայ սյնպէս յորջորջեցին զհասարակաց (բաղանիսն)  
Ջե. քրիստոս՝ ըստ անուանն զոր ունէր տեղին յառաջա-  
դոյն »

<sup>3</sup> « . . . Եւ շինեաց թագաւորն եւ յանդիման մեհե-  
նին Արտեմեաց զբարսաւանն մեծ յոյժ . . . Եւ զինքն  
Ափրոզիական զթեառոնն, իսկ զնորթ աղայ իսկ զնորթ  
զոր ոչ ժամանեաց կատարել »



Գաղղաղիոն Պաղղաղիոն տὸ λεγόμενον Παλλάδιον  
 քերածոյ, եւ եղ զնա ի ξόανον,<sup>1</sup> ἔθιχεν αὐτὸ  
 εἰς  
 τὸν ὑπ' αὐτοῦ χτισθέντα  
 Φοροσին Φόρον  
 ներքոյ սեանն ὑποκάτω τοῦ χίονος τῆς  
 στήλης  
 Գաղղի յիւրմէ կանգնեալ: αὐτοῦ,  
 ὡς τινες λέγουσι τῶν  
 Βυζαντίων ὅτι ἐκεῖ χεῖ-  
 ται<sup>2</sup>

Այս Ձ, է, Ը եւ Թ հատուածոց մէջ ի  
 վիպութիւն բերուած կտորները Մ. Խորենացւոյ  
 գրոց մէկ շրջանն կը վերաբերին, եւ Բ, 88 շրջանն  
 գրեթէ ամբողջ երկրորդ մասն են:<sup>3</sup> Ձաստիք յա-  
 աջ բերի այն կարգաւ, զոր կը ցուցնէ հայե-  
 բէն բնագիրն, եւ միայն անոր համար այլեւայլ  
 մասերու բաժնեցի, որովհետեւ Մաղաղասոյ այլեւ-  
 այլ տեղերուն կը համապատասխանեն: Պէտք չկայ  
 պնդելու այս կոչմանց նմանութեան՝ կրնամ բուել՝  
 նոյնութեան վրայ: Ար շատանանք բնութեցողին  
 մտադրութիւնը հրաիրելով այն իրողութեան  
 վրայ թէ այս հատակոտորոց մէջ աւանդուած  
 գրեթէ ամէն մանրամասնութիւնք այլուր ամենեւին  
 չեն գտնուիր, բայց միայն Մաղաղասոյ եւ Մ.

1 Ξόανον (արձան, փայտեայ) կ'ածանցի ξέω (քերել, յղկել) բառէն, ինչպէս +երթոյ կ'ածանցի +բել բառէն. որ ξέωին հետ նոյն նշանակութիւնն ունի:

2 «Իսկ Աստանդիանոս գաղտ հանեալ ի Հասովայ Գաղղաղիոն Պաղղաղիոն քերածոյ, դնէ զնա ի Փորոսին՝ զոր իւր իսկ շինեալ էր, ի ներքոյ սեան արձանին իւրոյ, զորմէ ասեն սմանք ի Բիւզանդացւոց եթէ կայ անդ:»

3 Անոգուտ չ'ըլլար մեր այս համեմատած բնագիրքը՝ դէմ առ դէմ՝ դնել այն համեմատութեանց հետ, զոր մի-  
 եւնոյն էջին նկատմամբ ըրած է — բայց ոչ առանց հեղ-  
 նութեան խոյթի մը — զխանկանն Հ. Բարսեղ Սարգսեան, Տեսութիւն Սեղեւորոսի Պատմութեան եւ Մ. Խորենա-  
 ցւոյ աղբերաց: Վենետիկ 1893, էջ 1 եւ 1Ա:

Խորենացւոյ քոյլ: Ձարհիւն ժամանակսն ինն  
գրեթէ բառ առ բառ օրինակած է Մաղաղասայ  
բնագիրը:

Ժ.

Մ. Խոր. Գ, 12.

Մաղաղաս, էջ 325—326:

Չեմ հոս ի մէջ բերեր այն բնագիրքն, որ Աստուծոյ ինքնակալի մահուան վրայ կը խօսին, որոնք արդէն հրատարակուած են վերնագոյն՝ էջ 3:

ԺԱ.

Մ. Խոր. Գ, 21.

Մաղաղաս, էջ 339 եւն:

Սաստիկ եւ յոյժ ահաւոր էր ի վերայ անիրաւաց վաղենախնոս. որով եւ զբարւժ իշխանս վասն յափշտակութեան սաստիկաց,

եւ զՌոդանոս ոմն

ներքինապետ

այրեաց կենդանոյն.

քանզի երիցս հրամայեաց, եւ ոչ դարձոյց զյափշտակութիւն

ընչից կնոջ միոյ այրւոյ:

Ὁ δὲ θειότατος βασιλεὺς Βαλεντινιανὸς πολλοὺς συγχλητικοὺς καὶ ἄρχοντας ἐπαρχιῶν ἐφόνευσεν, ὡς ἀδικοῦντας καὶ κλέπτοντας καὶ ἀρπάζοντας. Τὸν δὲ πραιπόσιτον τοῦ παλατίου αὐτοῦ ὀνόματι Ῥοδανόν, ἄνδρα δυνατώτατον καὶ εὐπορον καὶ διοικούντα τὸ παλάτιον

ὡς πρῶτον ὄντα ἀρχιευνουῶχον καὶ ἐν μεγάλῃ τιμῇ ὄντα,

ζῶντα ἔκαυσεν . . .

ὁ γὰρ πραιπόσιτος αὐτοῦ Ῥοδανὸς ἤρπασεν

οὐσίαν ἀπὸ τινος χήρας γυναικὸς κ. τ. λ.<sup>1</sup>

1 “Իսկ աստուածասքանչ թագաւորն վաղենախնոսն եւ իշխանս դաւառաց սաստա-

Յունարէն բնագիրը կը շարունակուի՝ պատմելով Վաղենտինիանու այլեւայլ ջանքերն որ Հռոմէացիներու անիրաւութեամբ յափշտակած սուսցուածքներն ետ դարձնէ: զնոյն կը բացատրէ Հայն ալ շատ Հակիրճ խօսքերովս. «Երէջ» հրատարակող, է- «չ ր-ր)» . . . :» Մտադրաս աղբււր եղած է ուրիշ բիւղանդեան ժամանակագրաց (Չատկ. Ժամանակագր., Աեդրեանու եւն.), որոնք ներբնիւսպետին Հռոմէացի արկածքը կը պատմեն: Հնագոյն պատմիչք այսպիսի բան չեն գիտեր:

ԺԲ.

Մ. Խոր. Գ, 29.

Մտադրաս, էջ 341-342:

. . . Հիւանդացեալ Վաղենտինուս

. . . Βαλεντινιανός νόσφ βληθείς μετὰ χρόνον έτελεύτα

ի բերդին որ կոչի Բերգիաիս վճարի ի կենցաղոյս, եղբորն փոխանորդելով զպէրութիւնն:

έν καστελλίφ Βιργιτινών' . . .

Καί έβασίλευσε ό θειότατος Βάλης ό άδελφός Βαλεντινιανού . . . "Ότε γάρ έτελεύτα Βαλεντινιανός ό αύτοϋ άδελφός, οδκ ήν έν Κωνσταντινουπόλει ό Βάλης, άλλ'ήν πέμφας αύτόν ό άδελφός αύτοϋ

Յետ բարբախտագոյն

έν τή ζωή αύτοϋ πολεμῆσαι

կեաց, իբրև անիրաւեալս եւ գողացեալս եւ յափշտակեալս. իսկ զվերակացու պաշտօնան իւրոյ Հռոմէացի անուն, զայր Հոգոր յոյժ եւ մեծատուն եւ մատակարար պաշտօնան՝ քանզի առաջին ներբնիւսպետ էր եւ ի մեծի պատուի, այրեաց կենդանոյն . . . քանզի վերակացու իւր Հռոմէացի յափշտակեաց ինչս ի կնոջէ միոյ այրւոյն:

1 Ստիգրատ. Գ, 30. «Յամբոցին որ կոչի Բերգիաիսն:»



Վաղեսի պատերազմաւ զիս զՅիսուս Կրիստոս  
 Վթապն յաղթութեամբ շահաւոր  
 դարձի . . .

εις το Σίρμιον προς  
 τους Γότθους· ούστινας  
 νικήσας κατὰ κράτος  
 ὑπέστρεψε . . .<sup>1</sup>

Բնագիրքս Համեմատելով՝ ինքնին երկու դի-  
 տողութիւնք կը ծագին:

1. Թէ Մ. Խորենացի եւ Թէ Յ. Մաղաղաս  
 կը դորձեն Հոս ի միասին մեծ պատմական սխալ մը՝  
 զՎաղէս յաջորդ զնելով Վաղենտինիանու: Վաղէս  
 արդէն տասուերկու տարի կառավարած էր, երբ  
 մեռաւ իւր եղբայրը (375): Երկուքն ալ արդեամբք  
 միեւնոյն տարին (364) ինքնակալ անուանուած էին  
 եւ պետութիւնը մէջերնին բաժնեցին այնպէս՝ որ  
 Վաղենտինիանոս արեւմտեան գաւառաց կ'իշխէր  
 եւ Վաղէս արեւելեան գաւառաց: Այս վայրկենէս  
 սկսեալ՝ «անդառնալի կերպով երկուքի բաժնուե-  
 ցաւ պետութիւնը, վասն զի Թէոդոսի ձեռօք  
 նորոգուած միութիւնը քանի մ'ամիս միայն  
 տեւեց:»<sup>2</sup> Ուստի Վաղէս Վաղենտինիանու յա-  
 ջորդութիւնն առած երբեք չէր կրնար բլլալ, այն որ  
 առիթ եղաւ Արեւմտից պետութեան բաժնուե-  
 լուն անոր երկու որդւոց մէջ՝ Գրատիանու եւ Վա-  
 ղենտինիանու Բ: Ուստի յոյն ժամանակագիրն եւ  
 Հայ պատմագիրն իրական պատմութեան բուրոյժին  
 Հակառակ են:<sup>3</sup>

2. Երկու բնագիրքն՝ Հայն եւ յոյնն՝ ի մեր-  
 ձուստ քննելով՝ կը տեսնուի որ առաջինն երկրորդին

1 « . . . Վաղենտինանոս անկեալ յախտ՝ յետ ժամա-  
 նակի վախճանի ի բերդին Բիրդիտինն: Եւ թագաւորեաց  
 աստուածաբանն Վաղէս՝ եղբայր Վաղենտինիանու . . . :  
 Քանզի իրբեւ մեռաւ Վաղենտինիանոս եղբայր նորա, Վա-  
 ղէս չէր ի կոստանդնուպոլիս, այլ առաքեալ էր զնա եղ-  
 բոր նորա՝ մինչդեռ կենդանի էր, ի Սիրմիոն պատերազմել  
 ընդդէմ Գոթթաց, որոց յաղթեալ զօրութեամբ գարձաւ:»

2 Տէրէւյ, Պատմ. Հասով. Հար. Է, էջ 397:

3 Մ. Խորենացի այնպէս լաւ իւրացուցած է Մաղա-  
 զասոց տուած յաջորդութեան կարգն, որ զՍ. Ներսէս եր-  
 կու անգամ Բիւզանդիոն գացած կը պատմէ, նախ Վաղեն-

Համառօտութիւնն է միայն: Մ. Խորենացի պատմելէն ետքը թէ տէրութիւնն անցաւ Վաղէնտինիանու եղբոր, անմիջապէս կը յիշէ Վաղէսի Գրքը: միայն յոյնէն այս մանրամասնութիւնը լաւ կրնայ Հասկըցուիլ՝ անոր պատմելոյն թէ Վաղէս Վ. Պոլիս չէր, երբ ինքնակալ Հռչակուեցաւ, եւ խաւրուած էր իր եղբորմէ Գոթաց դէմ պատերազմելու, եւ Գրքը-- (ὕπεστρεψε) անոնց յաղթելէն ետքը: Վերացընելով երկու Հեղինակաց պատմած դիպաց անպատմական ըլլալը, այսպիսի նշան մը վկայ է Հայոյն յունէն կախում ունենալուն:

## ԺԳ.

Մ. Խոր. Գ, 33.

Մաղաղաս, էջ 342:

... (Վաղէս)

Հրակէզ եղեալ յԱդրիանուպոլիս

սատակեցաւ:

... τοῦ οἰκήματος τοῦ ἀγροῦ

ἀδήλως ἀναφθέντος καὶ ἀναφθέντων τῶν σχαλῶν νυχτός,

ἀπώλετο (Βάλης) μετὰ τῶν κουβικουλαρίων καὶ σπαθαρίων αὐτοῦ.<sup>1</sup>

Հոս կարեւորն ոչ այնչափ բնագրաց նմանութիւնն է՝ որչափ Վաղէսի մահը պատմելու եղանակը: Գրտենք որ ինքնակալ Ադրիանուպոլսոյ դժբախտ պատերազմին (9 Օգոստ. 378) մէջ կորսուեցաւ. կ'ըսուի թէ նետէ մը խոցուած՝ տարուեցաւ խղիկ մ'որուն կրակ տուին Գոթք: Մեր այս երկու Հեղինակք պատերազմը չեն յիշեր. մանաւանդ թէ Մա-

սինիանու (թէպէտ սա Արեւմուտք կը նստեր), եւ յետոյ Վաղէսի ժամանակ (Գ, 21 եւ 29) Փաւստ. Բուզանդացի մի միակ ճամբորդութիւն մը գրուէ Ս. Ներսէսի ի Վ. Պոլիս. (Գ, 44. 5 եւնի)

1 " . . . քանզի տուն գեղջն դազտ Հրակէզ եղեւ եւ այրեցան դէզք խոտոց գիշերայն, սատակեցաւ (Վաղէս) Հանդերձ սենեկապանօք եւ սուսերապաճօք իւրովք:",

զաղասի պատմածը՝ որ արդէն մթին է՝ բոլորովին կ'արտաբռնէ պատերազմը: Աչաղէս, կ'ըսէ, փոխադրուեցաւ յԱղբիանուպոլիս շինութեան մը պատճառաւ: Այն խղիկն՝ ուր իջեւանած էր, կրակ առաւ՝ առանց գիտցուելու (ἀδῆλως) թէ ինչպէս. եւ որովհետեւ կրակը սանդուին պրած լափած էր, հրկէզ եղաւ ինքնակալն իրեններուն հետ: Մովսէս երբ Աչաղէսի մահուան վրայ կը խօսի՝ ուրիշ աղբիւր մ'առջեւն ունեցած չ'երեւար, բայց եթէ յոյն ժամանակադիրս. եւ այս կրնայ ցուցուիլ անով որ հայերէնին մէջ ասոր անմիջապէս յաջորդող նախադասութիւնք բառ առ բառ թարգմանութիւն են Մաղաղասէն, ինչպէս այժմ պիտի տեսնուի:

## ԺԳ.

Մ. Խոր. Գ, 33.

Մաղաղաս, էջ 344, 19—20:

Սա քահեկաց զմեհեանս կոռնն

Τοὺς δὲ ναοὺς τῶν Ἑλλήνων πάντα κατέστρεψεν

մինչեւ յատակս՝

ἕως ἐδάφους ὁ αὐτὸς Θεοδόσιος βασιλεύς.

գփակեալսն ի սրբոյն կոստանդիանոսէ,

[Κωνσταντίνος . . . τὰ ἱερὰ μόνον ἔχλεισεν καὶ τοὺς ναοὺς . . .]՝

Մաղաղաս, էջ 345, 12—19:

1 Փակագծի [ ] մէջ առնուած բառերը թերի են Մաղաղասոյ այժմու բնագրին մէջ. փոխ առնուած են անոնք Ձառքի Ժ. Գ. Գ. 303 Գ) որուն հեղինակն այնպիսի բնագիր մ'առջեւն ունէր որ ղեռ չէր համարօտուած. հմմտ. դարձեալ Մաղաղաս, էջ 324, տող. 1—4: Հայերէն լամբր. ձեռագիրն կ'աւելցընէ գփակեալսն բառէն ետքը փոյն բառը, որ Ա հնեակոյ տպագրութեան մէջ կը պակսի, բայց ստուգիւ նախնական բնագրին կը վերաբերի (τὰ ἱερὰ μόνον ἔχλεισεν.) Այս ալ նոր տպագրոյ մըն է՝ բաց անոնցմէ, զոր Նորայր իւր աղբերաց բնութեան մէջ (Քննաւոր, Բ, էջ 39, 40 եւն) յառաջ բերած է. հաստատելու որ լամբր. ձեռագիրն՝ իւր ընդմիջարկութեամբն ալ հանդերձ, կրնայ շատ լաւ ընթերցուածներ պահած ըլլալ:

... τοὺς τρεῖς ναοὺς  
τοὺς ὄντας ἐν Κονσταν-  
τινουπόλει... καταλύ-  
σας...

զանուանեալն Արեգահան  
եւ Արտեմեայ  
եւ Աφροδίտեայ

τόν τοῦ Ἑλίου ναόν...  
τόν τῆς Ἀρτέμιδος ναόν...  
τόν τῆς Ἀφροδίτης  
ναόν...

ի Βριζάνηρῶν.

Ἐπισημῶν, 344, 20-23:

աւերեաց նոյնպէս զսա-  
ճարն  
Գամսակի, եւ արար եկե-  
ղեցի.  
նոյնպէս եւ զսաճարն  
Իււզ<sup>1</sup>. քաղաքի  
զԼիբանոսի

ὁμοίως δὲ καὶ τὸ ἱερὸν  
Δαμασκοῦ ἐποίησεν ἐκ-  
κλησίαν χριστιανῶν.  
κατέλυσε δὲ καὶ τὸ ἱερὸν  
Ἑλίουπόλεως  
[τὸ τοῦ Βαλανίου,]<sup>2</sup>

<sup>1</sup> Այլ ընթերց. Իլն (այս. Վենեա. 1865):

<sup>2</sup> Բնագիրս կը լրացնենք ըստ Չատի. Ժամա-  
նակ. (էջ 303 Գ), որ Մ. Խորենացոյ զԼիբանոս բառին կը  
համապատասխանէ: Երկու ընթերցումներէն որք նախա-  
մեծար ընտրելու է: Գծուարարոյձ խնդիր մըն է, որուն  
մասնակ. որ քննութիւն մը կ'արժէ նախքէ: Յիշեալ հասուա-  
ածին մէջ յիշուած «հրաւիրուած էր իրենք» անուշա-  
Արեգահան տաճարն է ի Հեղիոսոյն, յայտնու. Պատմութե-  
(տես Ռէնան, Արեգահանութիւն ի Փիւնիկէ, էջ 314 եւն.)  
Մտադրաւ այլուր կը սրտամէ թէ այս «աշխարհի հրաշ-  
քն» (Թէաւա, էջ 380) ինչպէս շինուեցաւ Անտոնինոս Բա-  
րեպաշտէն եւ Արամազդայ նախորդեցաւ. եւ ստուգիւ սյա-  
տեղ խօսքն է Պատմութեան մեծ՝ եւ ոչ թէ փոքր՝ մեհենին  
փոյ, որ Արամազդայ մեհեան կը կոչուի: Հաւանական չէ  
որ Արեգահան տաճարն Լիբանոս նախորդած ըլլայ, քան զի  
Լիբան զից կամ մասնական Լիբանանու Բահայուն ܠܒܢܢ ܠܝܒܢ  
հեռն այլուր չենք գտներ, բայց միայն պղնձեայ անօթոյ  
մը բեկորքին փոյ եղած արձանագրութեան մէջ, որ մեր  
թուականէն թերեւս Թ. դար հին է (տես Corpus Inscription-  
um semiticarum, Pars I, Tom. I, p. 22 եւն.) կարելի  
է որ զԼիբանոսն ընթերցումն հիմնուած ըլլայ սխալ թարգ-  
մանութեան մը փոյ այն խօսքին՝ զոր Մտադրասոյ քով  
կ'ընթեանուք (էջ 280) «Հինեայ ի Հեղիոսոյն Փիւնիկե-  
ցոյ Լիբանոսն» (ըն ՙ Կոնստանտինոպոլսու Լիբանոսն  
Վոս) զմեծ տաճարն Գիւլայն Իսկ Չատի. Ժամանակագրոս-



զմեծ եւ զհռչակաւոր      το μέγα και περιβόητον  
 զԵրեքբարեանն:      τὸ λεγόμενον Ἱερὸν.<sup>2</sup>

ԺԵ.

Մ. Խոր. Գ. 39.

Մտախոս, էջ 347:

Բայց Պապայ լուեալ  
 եթէ

մեծն Թէոդոս

եւ ի Բիզանդիոյ

ի Հռովմ կոյս,

եւ մտեալ ի Թեսաղոնիկ

հանդերձ սպայիւն,

եւ յաղաղս իջականին

եղեւ խռովութիւն ընդ

նա եւ ընդ բարաբարսն,

Ὁ δὲ αὐτὸς Θεοδοσίος  
 βασιλεὺς

ἀπὸ Κωνσταντινουπό-  
 λεως ἐξελθὼν

ἐπὶ Ῥώμην

εἰσῆλθεν ἐν Θεσσαλονί-  
 κῃ πόλει

καὶ τοῦ ὄντος μετ' αὐτοῦ  
 στρατιωτικοῦ πλήθους

διὰ μιᾶτα ταραξάντος  
 τὴν πόλιν,

ἐστασίασαν καὶ ὕβρισαν  
 τὸν βασιλέα οἱ Θεσσα-

λονικεῖς. Καὶ θεωρήσας  
 ἰππικὸν

Բեան՝ Բալանիոս (Βαλάνιος) ըսելուն նկատմամբ՝ անցյալ է մեզ այս բանին ճագումն, որ այլուր չի գտնուիր եւ շատ դժուարութիւններ կը պատճառէ: Հմմտ. Ռընանի մեկնութիւնքը (Ուղեւ. ի Փիւնիկէ, էջ 320), եւ Պօսիւէն, (Baudissin, Jahveh et Moloch, էջ 35) եւն:

1 Ընթերցողին աւելի դիրքնցընելու համար բնագրաց համեմատութիւնը, ստիպուեցանք վերջին նախագասութեանց կարգը տեղափոխել: Մտախոսայ բնագրին մջ կարգն է այսպէս. նախ κατέλυσε — τριλίθον, եւ յետոյ ὁμοίως — χριστιανῶν.

2 “Չամենայն տաճարս Հեթանոսաց քակեաց մինչեւ յառաջն՝ թագաւորն Թէոդոսիոս: [Կոստանդիանոս . . . քակեաց միայն զմէհեանս եւ զտաճարս . . .] (էջ 344, 12—19): . . . Իսկ զԵրեսին տաճարսն՝ որ ի Կոստանդնուպոլսիս էին, . . . քակեաց . . . զտաճարն Արեգական . . . զտաճարն Արտաճեայ . . . զտաճարն Ափրոզիտեայ (էջ 344, 20—23.) նշնպէս եւ զմէհեանն Գամասկի արար եկեղեցի բրիտաննէից. քակեաց եւ զմէհեանն Հեղուպոզսի [զԲանդանիսի] զմեծն եւ զհռչակաւոր զասացեալն Երեքբարեանն:”

եւ ճարտ խռովութեան, ἐν τῇ αὐτῇ πόλει γέ-  
 μοντος  
 եւ յաղթեալ ինքնակա- տῶ Ἰππικοῦ ἐκέλευσε  
 լին՝ τοῖς εὐθῆναι·  
 սատակեաց ի քաղաքա- καὶ ἀπώλετο πλῆθος  
 ցեայն  
 արս հնգետասան հազար: χιλιάδων δεκαπέντε.<sup>1</sup>

Հոս ալ կը գտնենք դարձեալ զՄաղաղաս եւ զՄ. Խորենացի միաբան իրարու, բայց բուրբովին հակառակ պատմաբանօրէն ուղիղ հաստատուածին: Եթա ստղգ է որ Թէոդոս ի Թեսաղոնիկէ շէր, երբ հոս պատմուած դէպքերը պատահեցան: Ինքնակալն ի Միլան լուց ապստամբութեան լուրն, որուն զոհ գացած էր Թեսաղոնիկէի պահակազօրուն հրամանատարն, եւ Միլանէն էր — ինչպէս կը վկայեն Ս. Ամբրոսիոսի թղթերը, — որ պաղարհունութեամբ հրաման խաւրեց քաղաքին ժողովուրդը կոտորելու: Իսկ խռովութեան պատճառը կը գնեն՝ միայն Մաղաղաս եւ աւելի կամ նուազ իրմէ ուղղակի կախումն ունեցող ժամանակագիրք՝ ինչպէս Թէոփանէս (Ը դար) եւ Աեդրենոս (ԺԱ դար), զայն՝ թէ կռիւ մը ծագեցաւ զօրաց օթեւանելու (μετ'ατα) պատճառաւ: Եթինն բսելու ենք սպանելոց թուոյն նկատմամբ: Եթա Մաղաղաս է որ 15.000 թիւր կը յիշէ, որուն կը հետեւի Չոնարաս (ԺԲ դար.): Թէոդորեոս՝ որ աւելի հին եւ արժանահաւատ է՝ միայն 7000 մեռեալ կը յիշէ: Աեդրենոս երկու թուերս ալ յառաջ կը բերէ, բայց կ'երեւայ թէ նուազագոյնը կը նախընտրէ, «7000, ոմանք աւեն 15.000:»

<sup>1</sup> «Թագաւորն Թէոդոսիոս ելեալ ի Կոստանդնուպոլսոյ ի Հռովմ կոյս՝ չոգաւ ի Թեսաղոնիկէ քաղաք. եւ քանզի որ ընդ նմայն էր զօրուն բազմութիւն յազագս իջավանին խռովեցոյց զքաղաքն, ապստամբեցին եւ թշնամանեցին զԹագաւորն Թեսաղոնիկեցիքն: Եւ տեսեալ հեծելազօր՝ լցեալ ի քաղաքին հեծելագնդին՝ հրամայէր սպանանել, եւ կորեաւ բազմութիւն հնգետասան հազարաց:»

## Ժ Զ.

Մ. Խոր. Գ. 41

Իսկ մեծն Թէոդոս

էլեալ ի պատերազմ,  
 ի Միզուլանոն Հիւան-  
 դացեալ  
 մեռաւ . . .

Մայրապետ, էջ 346:

Ὁ δὲ αὐτὸς Θεοδοῖσιος  
 βασιλεὺς ποιήσας πρό-  
 χενσον  
 ἀπιῶν ἐπὶ πόλεμον,  
 ἐν Μιζουλάνῳ ἠδρό-  
 στυσε  
 καὶ τελευτᾷ χ. τ. λ.<sup>1</sup>

Այս վերջին հասուածիս մէջ կարեւոր կէտն,  
 որմէ կրնանք եղբակացութիւն մը հանել, այն  
 քաղաքին անունն է, ուր մեռաւ Թէոդոս: Ի՞նչ է  
 պատճառն որ Միլան անունը փոխանակ սովորական  
 Մէդիոլանն ձեւին՝ զոր Եւսեբեայ Քրոնիկոսը<sup>2</sup>  
 կ'ընծայէր Մ. Խորենացւոյ, վերջինս ընտրած է  
 անուանս այնպիսի ուղղագրութիւն մ'որ այնչափ  
 նման է Մաղաղասայ Միջուլանոն անուան:<sup>3</sup> Եթէ  
 մեր ընթերցողքն ալ նախընթաց համեմատու-  
 թիւնքն այնպէս մեկնած են՝ ինչպէս մենք, պիտի  
 չյայտարարեն ուղղել ըստ յունին՝ զՄէդիոլանն  
 ի Մէդիոլանն: Եւ այս այսպէս ընելու այնչափ  
 աւելի պատճառ կայ, որ Մէդիոլանն արդէն հրա-  
 տարակշաց բրած մէկ սրբագրութիւնն է, եւ  
 ձեռագրի մը մէջ չի գտնուիր: Արդեամբք ալ  
 Վենետիկոյ (1865ին) հրատարակութեան մէջ կը  
 կարդանք: «Ամենայն օրինակք. է Մէդիոլանն»

<sup>1</sup> «Իսկ թագաւորն Թէոդոս համար արարեալ զօրուն  
 էլեալ ի պատերազմ ի Միզուլանոն Հիւանդացաւ եւ մե-  
 ռաւ եւն:»

<sup>2</sup> Հրտ. Աւգերեան, Բ, էջ 168:

<sup>3</sup> Այս ձեւն որ ասորական արտաբերութեան մը  
 արդիւնք է, երկու անգամ ալ կը գտնուի Մաղաղա-  
 սայ քով. (էջ 297, տող 22, եւ էջ 298, տող. 1) ուր կը  
 պատմուի թէ Վաղերիանոս ի Միլան սպանուեցաւ (չփո-  
 թելով Գաղիանոս հետ), եւ չի գիտեր որ Վաղերիանոս  
 գերի բռնուեցաւ Պարսիկներէն: Պէտք է յիշել որ Մ. Խո-  
 ռենացի ուրիշ բան մ'ըսած չէ անոր վրայ, բայց միայն  
 թէ երկարչապրեցաւ. («Նոյն ժամանակ ի Միլանոն» Բ, 76):

կամ Միշու-դու-նն կամ Մի-դու-դու-նն կամ Միշու-  
 դու-նն կամ Մի-ու-դու-նն:» Աւերջին ընթերցուածս  
 անշուշտ սխալ ընթերցման արդիւնք է՝ «Միշու-  
 դու-նն» ձեւէ, որ կրնար կարդացուիլ «Միշուդանն»  
 կամ «Միշուդանն», բայց ոչ՝ «Մի-ուդանն»:»  
 Այժմ անշուշտ կ'ընդունուի որ մեր բաժնի սրբա-  
 գրութիւնը շատ յանդուգն չէ:

Սակայն չենք կարծեր որ հայերէն բնագրին  
 նախնական ընթերցուածն Միշու-լանն ըլլայ: Միտ  
 դրուի որ Աննեակոյ տպագրութեան յիշած հինգ  
 տարբեր ընթերցուածոց մէջն ալ վերջին երկրորդ  
 վանկերը միշտ -դու-նն են: Պէտք է ի նկատ առ-  
 նուլ այս միակերպութիւնն, որ դիւրին ալ է՝  
 ենթագրելով որ հայ թարգմանիչը կարդացած  
 ըլլայ MIZOYΔANON փոխանակ MIZOYΛANON,  
 եւ տառադարձած՝ Միշու-դու-նն: Շատ անգամ  
 առիթ տուած է այսպիսի սխալներու Δ եւ Λ տա-  
 ուերու նմանութիւնը. եւ այս կէտս հայ բնագրին  
 սակից ծագած ըլլալն այլ եւս տարակուսի տակ  
 չի թողուր:

Այս ամէն համեմատութիւններէս ելած եզ-  
 րակացութիւնն՝ մեզի կ'երեւայ թէ բաւական պայ-  
 ծառ կերպով ի յայտ կու գայ, այնպէս որ աւելորդ  
 է յաւելուլ որեւէ ազացուցութիւն մը: Աւանց  
 երկիւղի սխալելու՝ կրնանք հաստատել որ հայե-  
 ընն բնագիրը յառաջ եկած է անոր դէմ առ դէմ  
 դրուած յունարէն բնագրէն: Ուստի եւ Մ. Խորե-  
 նացի ճանչցած եւ գործածած է Մաղաղասայ  
 ժամանակագրութիւնը:

Մի միակ առարկութիւն մը՝ եթէ հիմնաւոր  
 ըլլար՝ կրնար այսպիսի հետեւութիւն մը տկա-  
 րացնել: Ուստի լաւ է որ կանխաւ իսկ պատաս-  
 խանենք անոր՝ մինչդեռ չէ իսկ յարուցուած:  
 Մեր ընդդիմաբանք պիտի ըսեն անշուշտ որ Մ.  
 Խորենացի չէ տեսած Մաղաղասայ գիրքը, բայց



գործածած է միեւնոյն յիշատակարանն՝ զոր գործածեր է յոյն ժամանակագիրը: Ուրիշ բառերով՝ Մովսէս եւ Մաղաղաս հարկաւորաց շէնքէ մը քաղած են: Այս առարկութիւնն արժէք մը կ'ունենար, եթէ ամենափոքր նշան մ'ալ գտնուէր որ այսպիսի աղբիւրի մը գոյութիւնը յայտնէր. ապա թէ ոչ ենթադրութիւն մըն է առանց հիման: Արդ ամենամեծ խնամքով փնտռեցինք մենք այսպիսի նշան մը, մանրամասն ուսումնասիրելով ի մէջ բերած կտորներուն ամէն մէկը: Մեր հետազոտութիւնն ի դերեւ ելաւ: Ամէնէն նշանաւոր կոչմանց մէջ աւելի հնագոյն ժամանակ ելլել չկրցանք քան մինչեւ ի Մաղաղաս: Եւ միտ դնելու է որ հոս խօսքը հատակաորի մը վրայ չէ, եւ ոչ աննշանակ աղբիւրի մը: Այն յիշատակարանը, որուն գոյութիւնն ապացուցանել պէտք էր, դատելով մեր ունեցած ծայրաքաղ համառօտութիւններէն՝ հարկ էր որ գտնէ Տակիտոսի ինքնակալին մահուանէն (276. թիւ Բ.) մինչեւ Թէոդոս Մեծին մահը (395, թիւ ԺԶ.) հասնէր: Արդ քանի որ ամենեւին հետք մ'ալ մնացած չէ՝ ուղղակի կամ անուղղակի, այս միայն բաւական էր ինքնին՝ ջրելու այն ենթադրութիւնը թէ հասարակաց աղբիւր մ'ունեցած ըլլան:

Ընդ հակառակն ի մէջ բերուած յոյն կտորներն շատ կէտերով իրարու կը նմանին. ամէնն ալ միջադէպներ պատմելու ձգտում մ'ունին, սխալաւոր եւ բարբարոսական լեզու մը՝ լի լատին եւն բառերով. այնպիսի հանգամանքներ՝ որ բոլորովին կը համաձայնին Մաղաղասայ գործքին, եւ որուն առանձնայատուկ գրոշմ մը կու տան: Հայ թարգմանութիւնը Մաղաղասայ ժամանակագրութեան ասորի-յունական ոճոյն յատկութիւնքը յաճախ ընդգրկած է:

Մ. Խորենացւոյ գործած մէկ՝ աւելի ընդհանուր կարգի՝ սխալը թերեւս յայտնագոյնս կը



յուրքնէ թէ կախում ունի Մաղաղասայ ժամանակագրութենէն եւ ոչ թէ հնագոյն գրութենէ մը: Տեսանք ժ.Բ հատուածին մէջ որ Վաղենախնիանու յաջորդ կը դնէ զՎաղէս, որուն մէջ համաձայն է յոյն ժամանակագրին հետ: Արդ այս կարգի սխալները Մաղաղասայ գործքին ամենէն աւելի որոշիչ նկարագիրներէն են. ինք մի միակն է բովանդակ հռոմէական կայսրութեան պատմագրաց մէջ, որ չ'ընդունիր թէ երկու ինքնակալք կրցած են միեւնոյն ժամանակ իշխել: Այսպէս Թեոդոսի յաջորդ կը դնէ զՄոորիոս, եւ Ռնորիոսի մահուանէ ետեւ՝ զԱրկադիոս: <sup>1</sup> Նմանապէս Աստանդիանու նախորդներուն յաջորդութիւնն ալ հետեւեալ կերպով ըմբռնած է. «Գիողղեախանոսի՝ անոր հրաժարելէն ետքը՝ կը պայազատէ Մաքսիմիանոս շերկուղէս, որ դարձեալ կը հրաժարի եւ դահը կը թողու Մաքսենախոսի (այսինքն՝ Գաղերիոսի.) ապա կու գան յՎրդուրդ Աստանդիոս Քլորոս, Կ. Քլորոսի մահուանէն ետքը՝ Լիկինիոս, եւ Լիկինիոսի մահուանէն ետքը՝ Աստանդիանոս Մեծն:» <sup>2</sup>

Կարծենք թէ այս խորհրդածութեամբը՝ զորոնք կրնայինք աւելի եւս ընդարձակօրէն պարզել, եթէ պէտք ըլլար, ի դերեւ հանած կ'ըլլանք հասարակաց աղբիւր մը դնելու ենթադրութիւնը: Ուստի աւելի եւս ապահովութեամբ կը դառնանք մեր յստաջագոյն հաստատածին թէ՛ Մովսէս Խրենացի Բաղմախնի քրոնիկոսներ ըրած է Յովն. Մաղաղասայ ժամանակագրութենէն. որ աւանդին Չորոսն վերջին երրորդ մասն է: <sup>3</sup> Եթէ Հայոց Պատմութեան ուրիշ աղբիւր չճանչնայինք, կրնայինք եզրակացընել որ այն գիրքը Չ դարուն վերջէն կամ

<sup>1</sup> Մաղաղաս, էջ 349 եւն:

<sup>2</sup> Մաղաղաս, էջ 311 եւն:

<sup>3</sup> Մաղաղասայ հայերէն թարգմանութեան մը կառելի, եթէ ոչ հաւանական՝ գիւտն անշուշտ այս ժամանակամիջոցն աւելի եւս յետս պիտի մղէ:

Է դարուն սկիզբէն յառաջ չէր կրնար գրուած ըլլալ : Սակայն Սոկրատայ հայ թարգմանութեան տարեթիւն արդէն դար մ'աւելի յետս մղած է զմեզ . եւ ցայսօր բան մը գտնուած չէ՝ որ մեր յառաջագոյն հանած հետեւութիւնքն եղանակաւորենք : Ուստի ներկայ ուսումնասիրութեամբս միայն այն հետեւութեանց հաստատութիւնը կ'ուզենք : Այժմ դրականապէս հաստատուած է որ անկարելի է Հայոց Պատմութիւնը Ե դարու վերջերը կամ Զ դարու սկիզբը գնել . իսկ եթէ աւանդութեան տուած ժամանակամիջոցն այլ եւս կարելի չէ պաշտպանել, չենք տեսներ ստուգիւ որեւէ գիտնական պատճառ մ'որ արդեւու զմեզ զայն մինչեւ Ը դար յետս մղել :

Փարիզ, 31 Դեկտեմբեր 1893 :





Մովսէս խորենացի եւ Պրոկոպիոս :

Սալուստիոս՝ Յուկուրթայի դէմ մղուած պատերազմին պատմիչը, այն առթիւ իրեն կարծիքը կը յայտնէ Մաւրիտանացւոց ծագման մասին :<sup>1</sup> Ըստ իրեն՝ Մաւրիտանացիք սերունդ են Պարսից, Մարաց եւ Հայոց, որոնք Հերակղեայ բանակին մէջ էին, եւ այն դիւցազին մեռնելէն ետքը Սպանիայէն Ափրիկէ անցան :<sup>2</sup> Հինդ դար վերջը յոյն պատմիչն Պրոկոպիոս՝ պատմելով Յուստինիանու Վանդալաց դէմ մղած պատերազմը կը խօսի նոյն նիւթոյ վրայ, բայց իբրեւ քրիստոնեայ պատմիչ մ'որուն ծանօթ է իւր Աստուածաշունչը : Ըստ Պրոկոպեայ՝ Մաւրիտանացւոց նախնիք այն Քանանացիքն են՝ որ Իսրայէլացւոց արշաւելովն իրենց հայրենիքէն վտարուած՝ գացին հաստատուեցան Ափրիկէի հիւսիսային ափունքք : Իրեն տեսութեան ի նպաստ կ'ելէ իրողութիւն մ'ալ : Նումիդիոյ Տիդիսիս (Տիդիսիս) քաղաքին մէջ, կ'ըսէ, կը գտնուի փիւնիկերէն արձանագրութիւն մ'որ այսպէս է. «Մէ + է + քի + անցեալն յերեւոյց Յեսուայ աստուծոյ, որդւոյ Նասուայ :<sup>3</sup>»

Այս կարգի յիշատակարան մը պէտք էր պատմաբանից մտադրութիւնը սաստկապէս զարթուցանել : Ասոր համար ալ այն արձանագրու-

1 Վասն յաստուծոյն պատերազմին, ժ.Ը :

2 Սէն-Մարթէն երկար ուսումնասիրութիւն մը նուիրած է պաշտպանելու՝ գոնէ յէականս՝ Սալուստիոսի կարծիքը համա. Գիտաբանական Սալուստիոսի մէջ որդւոյն վրայ՝ Մաւրիտանացւոց պատմական շահման նկարագրի Յիւլիոս Պրոկոպիոսն ձեռնարանին Արշակունցի Գիտաբանական Սալուստիոսի վրայ, ժ.Բ, էջ 181—256 :

3 Պրոկոպիոս, Վասն Պատերազմին Վանդալաց, Բ. 10 :

Թիւնն՝ որուն վրայ կը խօսի Պրոկոպիոս, շատ անգամ յիշուեցաւ, մեկնաբանուեցաւ, վիճաբանութեան նիւթ եղաւ: Այսօր ոչ ոք անոր վաւերականութեան պաշտպան կ'ելլէ. եւ նոր գիտնոց մէջ միայն Շրէօտէր ծանօթ է մեզ որ հակամէտ էր բնդունելու զայն: <sup>1</sup> Սակայն որչափ ալ օգտաւէտ բլլայ այսպիսի խնդրոյ մը քննութիւնը չենք՝ կրնար հոս ասոր վրայ խօսելու յօժարիլ: Մեզի կարեւորն է միայն Պրոկոպիոսի պատմածին սկիզբն ու ծագումը:

Այս պատմութիւնն աւանդող պատմագրաց առաջինն ըստ կարգի ժամանակին՝ է Եւագրիոս Զ դարուն վերջը, ինքն ալ Պրոկոպիոսի պէս այս իրողութիւնը կապած է Բեղխարու Անդալաց դէմ ըրած արշաւանքին հետ. բայց իր պատմութիւնը կը սկսի ըսելով թէ ոչ ոք այս բանն իրայ խօսած էր մինչև Պրոկոպիոսի ժամանակ: <sup>2</sup> Եւ սակայն լիովին հաւատք կ'ընծայէ Պրոկոպիոսի այն վկայութեան որ կը յայտարարէ թէ անմօք կարողացած է ինքն արշաւագրութիւնը: <sup>3</sup> Ի հարկէ այսպիսի բան մը չենք գտներ բնագրին մէջ՝ որուն կ'ուղղէ զմեզ Եւագրիոս: Սակայն իրեն ըսածը մեկնելու համար պէտք չկայ ենթադրելու որ ինքն ուրիշ բնագիր մ'ունեցած բլլայ՝ մերինէն տարբեր եւ կամ թէ այնպիսի տեղեկութիւններ ալ ունեցած իրեն տրամագրութեաններքեւ, որ այսօր կորսուած բլլան: Պէտք է Պրոկոպիոսի պատմածը մտադրութեամբ կարդալ, եւ կը տեսնենք որ ականատես մըն է պատմողը: Գիտենք որ ինքը մասնակից էր Ափրիկէի արշաւանաց իբրեւ կցորդ Բելխարի սպայապետաց-խմբին, ինչպէս սովոր ենք կոչել այսօր. նաեւ. հռչակաւոր զօրավարին մեկնելէն ետքն ալ կեցաւ ինքը Աւան-

<sup>1</sup> Շրէօտէր, Փիւնիկերէն լեզուն, էջ 3:

<sup>2</sup> Եւագր. Պատմ. Եկեղ. Դ. 8. «Ասէ (Պրոկոպիոս) եւ զայլ ինչ . . . որ չէ ուրեք պատմեալ նախ քան զնա . . . »

<sup>3</sup> Անդ. «որ եւ ասէ թէ ընթերցեալ իցէ զայն զգրեալն փիւնիկերէն նշանագրօք:»



դալաց ձեռքէն յետս դրաւեալ գաւառաց մէջ: Երկրին մէջ բրած իւր շրջագայութեանց ժամանակ անշուշտ այցելած է Տիգրիսի քաղաքը՝ եւ տեսած անոր հնագոյն ամրոցը (Φρούριον) որուն համար կ'ըսուէր թէ Քանանացիներէն շինուած ըլլայ: Հոն տեսած է նաեւ «պիտակ մարմարէ երկու սիւները, որոնց վրայ քիւնիկիւն որտեքով է Փիւնիկեցոց լեզուս» ասէր: Եր<sup>1</sup> այն արձանագրութիւնը, որուն վրայ կը խօսի: Ծանօթ է իրեն որ այս սիւները կը գտնուէին Տիգրիսի մէջ «չբեր մար»: Եւս ամէն մանրամասնութիւնը հարկ է որ ամենամեծ ճշգրտութիւն ունենան, եւ ականատես վկայ մը կը մասնեն: Բոլորովին ալ կը համաձայնին տեղեաց այժմու վիճակին հետ: Տիգրիսի գիւրքը ճանչցուեցաւ որ այժմու Տաուրգա գիւղին տեղն է, Գեղղիւսէն իբր քսան հազարամեթր հեռու գէպ ի հարաւարեւելք: 3 Հին բերդին աւերակաց ստորոտն որ ցայսօր ալ գրեթէ անմատոյց կը համարուի, տակաւին կը բղկէ ակնաղբիւրը: Չայն պատող պարսպին մէջ ազուցուած են հին բեկորներ, որոնց մէկ բարձրաքանդակն արդէն հրատարակուած է: 4 Թերեւս օր մ'ալ գտնուին հոն այն երկու սիւները փիւնիկական արձանագրութեամբ, զոր տեսած է Պրոկոպիոս:

Պրոկոպիոս բոլորովին անկարող էր փիւնիկերէն կամ կաթեղանական արձանագրութիւն մ'ընթեռնուլ, եւ շատ հաւանական է որ նոյն

1 Վան Վանդալաց, Բ. 10 «Անգ են երկրքին սիւնքն ի սպիտակ քարանց մերձ առ աղբերական մեծի, որ ունին նշանագիրս փիւնիկականս՝ քանդակեալ ի լեզու Փիւնիկեցոց, որ ունին այսպէս . . .»

2 Քիչ մ'ետքը (զլ. ժ. Գ) նորէն կը յիշուի Տիգրիսի աղբիւրը, որուն գիւրքը շատ ճիշդ նկարագրուած է:

3 Շատ մը նոր գտնականք, ի միջի այլոց Մովսէսի կը շփոթեն զՏիգրիսի հետ (Թանճէր) Եւս սխալին սկզբնապատճառն եղած կ'երեւայ Պրոկոպիոսի բնագրին լատին թարգմանիչը՝ Գրոպիոս:

4 Բ. Վիւնիէրալ, Հռոմեական աւերակք Ալեքերից. Քաղիլաստան Ճուրճուրայի: Փարիզ 1868, էջ 8 եւն:

վիճակին մէջ էին այն ժամանակ երկրին բոլոր անձինքը: Ուստի ստիպուած ենք ընդունիլ որ զոհ եղած է տեղական կարծեցեալ գիտնոյ մը խարէութեան, որ անշուշտ Մաւրիտանացոց քանանեան ծագումն ունենալուն վրայ խօսակցութիւն մ'ընելէն ետքը՝ իրեն յուցուցած եւ մեկնած բլլալու է արձանագրութիւն մ'որով զինքն իր կարծեաց մէջ հաստատել կարենայ: Միայն Պրոսկոպիոս չէ՝ որուն այս տեսակ պատահար մը գիպած բլլայ: Զինչ եւ իցէ՝ ամենայն վստահութեամբ իւր հնախօսական գիւտը մուծեց իրեն վանդալաց պատերազմին վրայ դրած գրքին մէջ՝ որ լոյս տեսաւ 550 կամ 551ին: <sup>1</sup>

Ուստի պարզ աւանդութիւն մը չէ այն զոր կրկնած բլլայ Պրոսկոպիոս. բոլորովին նոր իրողութիւն մըն է զոր բերած է Ափրիկէի իւր արշաւանքներէն եւ որով ճօխացուց մարդկային ծանօթութիւնքն: Եւագրիոս իրաւունք ունի ըսելու որ Պրոսկոպիոսէն յառաջ ոչ ոք խօսած էր այս արձանագրութեան վրայ: Բայց այն ատեն այս խընդիրը շատ կարեւոր կէտ կ'ըլլայ Մովսիսի Խորենացոյ աղբերաց քննութեան տեսակիտիւ: Արդեամբ ալ Խորենացի կը պատմէ (Ա. ժԹ) թէ Քանանացիք՝ Յեսուայ առջեւէն փախչելով ապաստանեցան յԱզոսա (°), եւ թէ այս բանս կը հաստատուի յաջորդ արձանագրութեամբ, զոր ջայսօր ալ կրնայ մարդ տեսնել յԱփրիկէ, քանդակուած սեան մը վրայ. « Ի Յեսուայ իւրոյ փախչելու մէտ նախարարս քանանացոց ելիս քնակել սոր: » <sup>2</sup>

Առաջին տեսութեամբ կը գտնենք այստեղ Պրոսկոպիոսի պատմածէն քաղուածք մը: Սակայն մանրախոյզ համեմատութիւն մը կը ջուցընէ քանի մը տարբերութիւններ, որնք արժանի են

<sup>1</sup> Քրոնոլոգիէր, Պատմ. Բիւզանդեան Մատենագրութեան, էջ 42:

<sup>2</sup> Մ. Խոր. Գիրք Ա. գլ. ԺԹ:

նկատողութեան առնուելու: Նախ քան անցնելէ քառք Պրոկոպիոսի այն տեղւոյն մէջ չկայ, ուր միայն Պաղեստինի երկու ազգեր յիշուած են՝ Գերզէ- սայիք եւ Յերուսայիք. (Γερρασαῖοι τε καὶ Ἰερουσαῖοι.) Փախտականք այնտեղ չեն ըսուիր բնաւ թէ բլլան նախքան, այլ ամբողջ ժողովուրդն (ὁ λαός) է որ կը գաղթէ երկրէն: Ըստ Պրոկոպեայ՝ ապաստանեցան Քանանացիք ի Լեբիա (εἰς Λιβύην ἐστάλησαν). Խորենացի՝ որ այլուր Լեբիէ բառը կը գործածէ (Բ, Բ) հոս ուրիշ բառեր գործածած է՝ Աֆրոս, զոր ետքէն պիտի մեկնենք, եւ Աֆրիկեցիք. այս բառերը Հայոց Պատմութեան մէջ մէյ մըն ալ չեն գտնուիր: Խորենացի չըսեր թէ սիւները երկու հատ էին, եւ Յեսու չի կոչուիր որքէ նախ արձանագրութեան հայերէն բնագրին մէջ: Արնայիք տակաւին յաւելուլ քանի մը մանրամասնութիւններ ալ, բայց այս նախընթացն ալ արդէն բաւական է: Ով որ ուսումնասիրած է Մ. Խորենացւոյ իւր աղբիւրները գործածելու կերպը, յայտնի է անոր որ հայ պատմագրին պատմածն չէ որքէ Պրոկոպիոսի պատմութենէն: Կամ թէ ըսենք՝ Պրոկոպիոսի գիրքը Մ. Խորենացւոյ աղբիւրն եղած չէ: Այս երկու հեղինակաց մէջ կայ երրորդ մ'ալ, զոր պէտք ենք այժմ փնտռել:

Այն պատմագրաց շարքին մէջ՝ որոնք Պրոկոպիոսի ծանուցած իրողութիւնն եւ արձանագրութեան բնագիրը յառաջ բերած են, ոմանք՝ ինչպէս Եւազրիոս՝ եւ Թէոփանէս (իբր 810ին)<sup>2</sup> Ճշդութեամբ կը համառօտեն իրենց գաղափարը եւ արձանագրութենէն բան մը չեն փոխեր. ուրիշներ՝ օրինակի համար այն համառօտութիւնքն՝ զոր Գրատէր Յովհաննու Ասիացւոյ<sup>3</sup> կ'ընծայէ, եւ

<sup>1</sup> Եկզ. Պամ. Դ, 18.

<sup>2</sup> Քամանակագրութիւն (հրատ. C. de Boor) էջ 200.

<sup>3</sup> Cramer, Anecdota graeca paris. II, 389.

Սուիդասայ Բասիլիդը՝ պատմութեան ինչ ինչ մասերը կերպարանափոխ կ'ընեն եւ արձանագրութեան ուրիշ բնագիր մը կու տան. Մէն+ Էն+ Քանանացի+, զբնի+ քիւրուսիան ըբա- ա- աղբն Յետոս:՝<sup>2</sup> Այս վերջնոցս մէջ կը գտնենք Խորենացւոյ աղբիւրը:

Արձանագրութեան նոր բանաձեւը չունի որքէ նախնայ բառերը, այլ ունի՝ Քանանացի+: Եթէ Մ. Խորենացի նախորդող Քանանացոց թարգմանած է, առ այս ունէր նախորինակ մը: Արդեամբք ալ թէ՛ Քրամերի եւ թէ՛ Սուիդասայ բնագիրը չեն ըսեր թէ ամբողջ ժողովուրդը մասնակցած է այս գաղթականութեան, այլ միայն ուրիշ+ (Քրամեր՝ αἱ δυνάσται, Սուիդաս՝ βασιλεῖς καὶ δυνάσται.)

Արձանագրութեան իբր ներածութիւն կազմող սողերն ալ հետաքրքրական համեմատութեանց առիթ կու տան: Եւ որովհետեւ Սուիդասայ բնագիրն ամէնէն աւելի կատարեալն է, զայս կը գնենք յաջորդողս Մ. Խորենացւոյ հայերէնին դէմ առ դէմ:

Մ. Խոր. Ա, ԺԹ.

Սուիդաս, հտծ. Χαναάν.

Ի սաստիկէ սորա զՔանանացի՝

. . . ἐχβαλὼν πάντας τοὺς βασιλεῖς καὶ δυνάτας τῶν ἐθνῶν. ὅτινες ὑπ' αὐτοῦ διωχόμενοι διὰ τῆς παραλίου Αἰγύπτου τε καὶ Λιβύης κατέφυγον

անցին ի սմանէ փախրստականք

ՄԱդասս

εἰς τὴν τῶν Ἀφρων

<sup>1</sup> Հատուածն Χαναάν, հրատ. Bernhardt, II, 2 հրատ. 1593ի է.ն:

<sup>2</sup> "Մէր եմք Քանանացիք, զորս փախրեաց Յետոս առաջակի":



նաւելով ի թարախս.  
եւ յայտնի գործամբ,  
որ յարձանս արհրիկեցւոց  
աշխարհին գրեալ

կան մինչեւ ցայսօր ժա-  
մանակի  
արդարապէս պայպէս.

χώραν . . .  
καὶ ἐν πλαξὶ λιθίναῖς ἀ-  
ναγραφέμενοι τὴν ἀλ-  
τίαν δι' ἣν ἀπὸ τῆς Χα-  
ναναίων γῆς ᾠκῆσαν  
τὴν Ἀφροικῆν.

καὶ εἰσι μέχρι νῦν αἱ τοι-  
αῦται πλάξεις ἐν τῇ Νου-  
μιδίᾳ, περιέχουσαι ὄ-  
τως.<sup>2</sup>

Հոս կը յաջորդէ յունին եւ հայոյն մէջ արձա-  
նագրութիւնը, զոր արդէն ուսումնասիրեցինք:

Այս երկու բնագիրքն համեմատելով՝ հե-  
տեւեալ զիտողութիւնքն ընել կը ստիպուինք:

1. Աճոս բառը, որուն Ափրիկէի նշանակու-  
թեամբ գործածուած ըլլալն արդէն ծանօթ էր,  
այժմ՝ կը մեկնուի յունարէնովս՝ «εις τὴν τῶν Ἀφ-  
ρων χῶραν»<sup>3</sup> (յերկրին Աճոց) կարծեմ թէ հաւ-  
անականագոյնս հայ թարգմանչին գործած մէկ  
սխալ ընթերցումն է այս. ապա թէ ոչ՝ զԱճոս  
պէտք է ուղղել Աճոց կամ Աճոց: Ստոյգ է  
միայն որ Աճոս չէր կրնար Աճոցիէն յառաջ գալ,  
ինչպէս երբեմն պնդած են:

1. Քրոմօրի հրատարակած բնագիրը յայտնապէս  
ճայրաբաղ մըն է Սուրիասէն, եւ է պայպէս. «Բանաւորք  
ագոց՝ վարեալք ի Յետուայ Նաւեայ, եւ ոչ ընկալեալ  
Տեղիւսացւոց, անցեալ բնակել յերկրին Ափրիկեցւոց՝ գրե-  
ցին».

2. «Մերժեալ զամենայն արքայս եւ զբանաւորս ագ-  
ոց. որ վարեալ ի նմանէ՝ ընդ ճոխփունս Եզրիպտոսի  
եւ Միւսայ փախեան յերկրին Աճոց եւ ի տախտակս քա-  
րեղէնս գրեալ զպատճառս, որ վասն ի Քսնանացւոց աշ-  
խարհէն եկին բնակել յԱփրիկէ. եւ կան մինչեւ ցայսօր այս  
տախտակս ի Նուսիդիա, որ ունին պայպէս».

3. Պրոմօ. «εις Λιβύην ἐστάλησαν. Թ դարուն սկիզբը  
Թէոփանէս կ'ըսէ գարձեալ. «զարեւմտեանն Միւսայ, զաշ-  
խարհն՝ որ կոչի Ափրոց», ժամանակագր. (հրատ. C. de Boor)  
Ա. էջ 93:



2. Երկու բնագրաց ամէնէն նշանաւոր տարբերութիւնը կը կազմէ այն ճամբան՝ զոր բռնած են փախտատական Քանաւացիք: Ըստ յոյն Սուրբասայ՝ ցամաքի ճամբան բռնելով կը հասնին Ափրիկէ՝ Էգիպտոսի եւ Լիբիայի ծովափունքը (παράλιος) գառնալով: Մ. Խորենացի ընդհակառակն կ'ըսէ՝ անցին նաեւ ի Թարսիս: Տարակոյս չկայ թէ այս բանս Ս. Գրոց՝ այն նմանողութիւններէն է, որոնցմով Խորենացի իւր գործածած ազբիւրներն մեծ յօժարութեամբ կը ճոխացրնէ:<sup>2</sup>

3. Սա բառերը փոխարինելով յայտնի կը մեկնեն Մ. Խորենացւոյ տուած արձանագրութեան վերջին մասը՝ եկեւ քանիչ շատ:

4. Անկարելի է՝ երկու բնագրաց վերջին նախադասութիւնքն համեմատելով՝ չճանչնալ երկուքին նմանութիւնը, գրեթէ նոյնութիւնը:

Ուստի ստիպուած ենք հաստատել թէ անձուկ ազգակցութիւն կայ Սուրբասայ բնագրին եւ Մ. Խորենացւոյն մէջ: Կ'ըսենք աղբակցութիւն, եւ ոչ կեղծութիւն: Նախ Խորենացի չէր կրնար գործածել Սուրբասայ գործքը, որ ժ. դարուն կէսերը կը գրէր:<sup>3</sup> Պատճառներ կան՝ զորոնք աւելորդ է հոս յառաջ բերել, որ կ'արդելուն զմեզ այս չափ յետս մղելու Հոյոց Պարսկական յօրինման ժամանակը: Ասկէ զատ քանի մասնականութիւնք Խորհել կու տան որ հայն շունէր իր առջեւն յոյն բառագրին ունեցած բնագրին բուրրովին նման բնագիր մը: Օրինակի համար՝ արձանագրութիւնը Պրոկոպիոսի եւ Խորենացւոյ քով

1 Յօդան Ա, 3 «Նաեւ ի Թարսիս»

2 Անցողակի մասնանիշ կ'ընենք հայ պատմագրին ուրիշ մէկ յատկութիւն: Ըստ անոր բոլոր քանանացի նախարարք շուաւեցին ի Թարսիս: Ասոնցմէ մին՝ հռչակաւորն Քանանիդաս (— «Յորոց քէ ի Քանանիդաս» —) հակառակ ուղղութիւնը բռնելով՝ կու գայ կը հիմնէ ի Հայս այս երկրին մէկ մեծ գերդաստանը: Այս ալ աղբերաց հոյոցոցոյ՝ մեծ մէկ նշխարն է, ինչպէս սովոր է ընել մեր հեղինակը:

3 Քրիստոսի ժամանակ, Պամ. բիւզ. մատենագր. էջ 261:

«Էանց վրայ գրուած է (στῆλαι, Խոր. արշան+) ըստ Սուրիդասայ տուած բնագրին +բրէ քախքաւիաց վրայ (ἐν πλαξί λιθίναις) էր<sup>1</sup>: Ընդհակառակը նոյն բնագիրը քախքաւիներ կ'ըսէ՝ ինչպէս Խորենացի «Էներ (արշան+), առանց անոնց թիւն որոշելու ինչպէս ունի Պրոկոպիոս (στῆλαι δύο):

Ուստի պէտք է զիմել ենթադրու թեան հասարակ աղբիւրի մ'երկու հեղինակաց: Թէ՛ Մ. Խորենացի եւ թէ՛ Սուրիդաս կը հետեւին Պրոկոպիոսի պատմածին մէկ նոր խմբագրութեան, զոր հաւանականագոյնս ժամանակագիր մը յիշողութեամբ միայն ըրած էր. եւ անտարակոյս երկուքն ալ քանի մ'եղանակաւորմունք ըրած են իրենց առջեւն եղած բնագրին վրայ:

Որն է այս հասարակաց աղբիւրը: Այս նկատմամբ ամենեւին տեղեկութիւն մը չունինք: Յօժարակամ կ'ընդունինք որ Մաղաղասայ կորսուած մէկ հատակտորն ըլլալու է, զոր մերթ ընդ մերթ կ'օրինակէ Սուրիդաս, եւ որուն այժմու բնագիրն շատ կրճատուած է այն տեղն՝ ուր Բելիսարի արշաւները պիտի պատմուէր:<sup>2</sup>

<sup>1</sup> Πλαξ կը համապատասխանէ հայերէն քախքաւին:

<sup>2</sup> Արդեամբք ալ Մաղաղաս բաւական մանրամասնութեամբ կը պատմէ Գեղիմերի յափշտակութիւնն (էջ 459), որ առիթ տուաւ պատերազմին: Յետոյ (էջ 478) կ'ըսէ մեզ թէ ինչպէս Բելիսար զԱնդալաց թագաւորը գերի բերաւ ի Կոստանդնուպոլիս: Սակայն բառ մ'ալ չ'ըսեր այն պատերազմական գործողութեանց նկատմամբ, որոնց յանդէցաւ Ափրիկէի աշխարհակալութիւնը: Այստեղ ապահովապէս պակաս կարո՞ մը կայ: — Կ'երեւայ նմանապէս թէ Սուրիդասայ «*Αφροι* անունը գործածեին Մաղաղասայ կը տանի զմեզ: Այս բառը (= Afri) օտար է դասական յունարէնին, եւ տակաւին չի գտնուիր Պրոկոպիոսի քով: Պապոսի յունական անուննց Բաագիրքը (Գ. սպագր. նորագ աշխատասիրեալ ի Պէնսիլթերի, 1884ին) «*Αφροι* բառին ուրիշ տեղ մը ցոյց չի տար՝ բայց միայն զՍուրիդաս: Արդ այս բառն՝ որ տարիներէն է ծագմամբ եւ այնպէս բիշ կը գործածուի Չ դարու յունարէնին մէջ, հինգ անգամ կը պատահի Մաղաղասայ այն հատակտորին մէջ, որ կը վերաբերի այն զիպաց որոնք զՅուստինիանոս մղեցին Անդալաց դէմ պատերազմի»

Զինչ եւ իցէ՝ մեր ուսումնասիրութիւնը զբահան հետեւանքի մը կը հասցընէ: Մ. Խորենացի գործածած է Պրոկոպիոսէն յետնազոյն խմբագրութիւն մը, եւ վերջինս չէ կանուխ քան Չ դարուն կէսերը: Որովհետեւ Պրոկոպիոսէն յառաջ ոչ ոք Քանանացւոյ արձանագրութեան վրայ խօսած է, աւելի հաստատուն կռուան մը կ'ունենանք քան Մաղաղասէն եղած բազմութիւ կոչմունքն, որ թոյլ կուտայ մեզ հաստատելու թէ Հոյոց Պատմութեան մէջ յիշատակարաններ կան՝ որոնք ամէնէն կանուխ մինչեւ Չ դարուն երկրորդ կէսը կը հասնին:

Վերջին խօսք մ'ալ: Արդէն հասած էի եզրակացութեան իմ հետազոտութեանցս, որոնց հետեւութիւնքն այժմ իսկ հաղորդեցի, երբ դուայ անոր հաստատութիւն մ'որ ինծի համար շատ մեծ յարգ ունի: Արդէն քառասուն տարի կայ որ լուսաբանուած էր այն ապացուցման զլխաւոր կէտը, այսինքն թէ Պրոկոպիոսի պատմութիւնը կանխագոյն է քան Մ. Խորենացւոյնը: Մովսէս՝ Փիւնիկեացւոյ մեծանուն պատմիչը՝ 1850ին հրատարակած մէկ զբքին մէջ զբաղած է Տիգրիսի արձանագրութեամբ: Իրեն ալ հանած եզրակացութիւնը կը նոյնանան իմիններուս հետ: Համեմատելով Պրոկոպիոսի եւ Մովսիսի պատմածները, կը հետեւցընէ թէ Խորենացի այստեղ ընդհանրապէս մը կրած պիտի ըլլայ, այսինքն յետնազոյն ձեռքէ կտոր մ'աւելցած: Իրեն այս բանս անով աւելի հաւանական կ'երեւար որ Խորենացւոյ այս կտորը, կ'ըսէ, կրնայ դուրս հանուիլ իւր ակզէն, առանց բնագրին թերի մնալուն:՝ Մովսէսի կարծիքը կ'ե-

ձեռնարկելու (էջ 459): Դժուար է այստեղ պարզ զուգահիշութիւն մը տեսնել:

՝ Մովսէս, Փիւնիկեցիք, Բ, 2, էջ 428 եւ մանաւանդ՝ էջ 433:

ընկայ թէ ցոյսօր անձանօթ մնացած է հայա-  
գիտաց . գոնէ չեմ գտներ զայն տեղ մը յիշատա-  
կուած :

Մեր նախորդ ուսումնասիրութիւնք թղլ-  
կու տան աւելի բնդ հանուք հետեւութիւններ հա-  
նել նոյն իրողութիւններէն :

Փարիզ, 18 փետրուար 1894 :









